



### ԹՈՒՐԹԻՈՅ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՄՊԱՆՆԱԾ Է ԶԻՆՈՒԱԾ ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Մայիս 15-ին Թուրքիոյ գերատարանը բեկանած է Պոլսոյ հայկական «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործով ստորին ատեանի կաշարացած դատավճիռները այն մասով, ըստ որում՝ ամբաստանեալները կապ չեն ունեցած յանցագործ կազմակերպութեան հետ:

«Հիւրընկէթ» թերթի հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, Գերատարան Ատեանի վճիռին մէջ ըստւոյն է, որ սպանութիւնը կատարուած է կազմակերպուած եւ զինուած յանցագործ խումբի մը կողմէ:

Միաժամանակ, Գերատարանը հաստատած է այդ գործով մեղադրուողներու նկատմամբ ստորին ատեանին կողմէ սահմանուած պատժամիջոցները:

Թրքական թերթը կը յայտնէ, որ Տինքի սպանութեան գործով դատապարտեալները վերստին պիտի կանգնին Իսթանպուլի այն դատարանի առջեւ, որ արձակած էր սկզբնական դատավճիռները:

2007-ի Յունուարին Հրանդ Տինքին «Ակոս»-ի խմբագրատան մօտ սպանած թուրք ազգայնա-



«Ակոս» թերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինքի

կան Օզին Սամասթ, որ ոճիրի պահուն տակաւին 18 տարեկան էր, 2011 թուականի Յուլիսին դատապարտուած էր 22 տարի 10 ամսուայ բանտարկութեան: Սպանութիւնը պատուիրելու համար մեղադրուող Յասին Հայալ դատապարտած էր ցմա՜հ, իսկ Սամասթին սպանութեան դրդելու համար մեղադրուող էր հրանդին թունջել՝ 10.5 տարուայ բանտարկութեան:

### ԹՈՒՐԹԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԱԾ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Վերջերս Թուրքիոյ իշխանութիւնները մտաւորականներէ բաղկացած յանձնաժողով ստեղծեց, որու հիմնական նպատակը քուրտերու հետ հաշտեցման գործընթացը յառաջ մղելն է եւ ընդհանրապէս փոքրամասնութիւններու հարցերը ուսումնասիրելը:

63 անձերէ բաղկացած յանձնաժողովին մէջ ընդգրկուած է նաեւ հայազգի լրագրող Էթիէն Մահչուպեան: Ինքնաձեռնուրբ թափուած է 7 ենթախանձնարամբերով՝ իւրաքանչիւրը մէկ ուղղութեամբ աշխատելու համար:

Փոքրամասնութիւններու հարցերով ենթախանձնաժողովը, Մայիս 12-ին Պոլսոյ Սուրբ Վարդանանց հայկական եկեղեցւոյ սրահէն ներս հանդիպած է ազգային եւ կրօնական փոքրամասնութիւններու ներկայացուցիչներու հետ:

Այդ հանդիպումը լուսաբանած «Հիւրընկէթ» թերթի թղթակից Վերճիհան Զիֆլիօղլու «Ազատութիւն» ռատիոկայանին տեղեկացուցած է, որ երեք ժամ տեւած հանդիպումի ընթացքին փոքրամասնութիւններու ներկայացուցիչները ներկայացուցած են իրենց պահանջները, ներառեալ՝ եկեղեցիներու, դպրոցներու, ազգային հիմնարկներու ունեցուածքի վերադարձը, դասագրքերու հետ կապուած հարցերը, ուր տեղ կը գտնեն փոքրամասնութիւններու նկատ-

մամբ թշնամանք սերմանող ձեւակերպումներ:

Յարուսթիւն Սանլի հանդիպման ժամանակ ըսած է, թէ այդ արտայայտութիւնները որքան կարելի է շուտ պէտք է հանուին դասադիրքերէն: Ան նաեւ նշած է, որ Թուրքիոյ ներկայի իշխանութեան՝ «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան օրօք շրջանորդ տեղի ունեցած է փոքրամասնութիւններու նկատմամբ եւ կառավարութիւնը աւելի մօտ է բայց կառավարութեան եւ փոքրամասնութիւնների միջեւ դեռ «կարմիր գիծ» կայ:

Սանլի ըսած է, որ մօտաւորապէս երկու տարի առաջ հիմնադրամներու օրէնքի փոփոխութիւնով, առաջին հերթին պէտք է վերադարձուէին համայնքներու սեփական տարածքները, բայց իսթանպուլի քաղաքային իշխանութիւնները կը յայտարարեն, թէ կանաչ տարածքներու կարիք ունին:

Փոքրամասնութիւններու ներկայացուցիչները նաեւ մտահոգութիւն յայտնած են՝ չիշելով թուրքիոյ անցեալի դէպքերը, երբ հաշտեցման ձախողած փորձերէն յետոյ սկսած են բռնաճնշումները: Մասնաւորապէս, անոնց կը մտահոգէ քուրտերու հետ հաշտեցման

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱԽՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՂԱԴԴԵՑ ԹՐԲԱԿԱՆ ԿՈՂԱԸ

Մայիս 13-ին, «Մինուփսիս Արմենիա» ընկերութեան ներս ուսանողներու հետ հանդիպման ընթացքին, Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան ծոն Հէֆլըրն անդրադարձած է շարք մը հարցերու, որոնց կարգի նաեւ՝ հայ-թրքական արձանագրութիւններուն, որու ձախողումին համար ԱՄՆ-ի դեսպանը մեղադրած է թրքական կողմը: «Հայաստան 3-4 տարիէ ամէն ինչ կ'ընէ եւ մենք կը մտածենք, որ այս մեծ յաջողութիւն էր Հայաստանի համար: Երկու նախագահները խիզախութիւն ցուցաբերեցին ստորագրութիւններու հարցով, բայց թուրքիոյ կողմէ ան չվաւերացուեցաւ: Անոնք կը փորձեն այդ հարցը կապել Լարաբաղի հետ», ըսած է դեսպանը յիշեցնելով, որ հայ-թրքական արձանագրութիւններու հարցով որեւէ նախապայման պէտք է ըլլայ, սակայն Թուրքիան մտափոխուած է եւ սկսած է Լարաբաղի հարցը կապել անոր հետ:

«Հայաստան շատ լա դրսեւորեց ինքզինքը: Այս երեք տարիներու ընթացքին ձեռքը երկարած էր, բայց թուրքերը քայլ չառին», ընդգծած է ծոն Հէֆլըրը:

Խօսելով Ամերիկայի կողմէ Յեղապահութեան ճանաչման հարցի մասին, դեսպանը ըսած է որ, Հայաստան բարձր երկիր է, քանի որ 1915 թուականի իրադարձութիւնները ինդիւիներ յառաջացուցած են: Ինք ուղղակի կ'ենթարկուի ԱՄՆ-ի նախագահին, բայց նաեւ իր խողովակներով կը փորձէ ճնշում գործադրել ԱՄՆ-ի



Հայաստանի մօտ ԱՄՆ դեսպան ծոն Հէֆլըրն

նախագահի վրայ՝ 1915 թուականի իրադարձութիւններու ընդունման համար:

Անդրադառնալով Հայաստանի զարգացման ուղղութիւններուն, Հէֆլըրն ըսած է. «Յաջողութեան հասնելու համար Հայաստան պէտք է ունենայ տարբեր տարբերակներ եւ պէտք է կախուած ըլլայ մէկ տարբերակէ, հետեւաբար մենք կը քաջալերենք, որ Հայաստան նախ դէպի Արեւմուտք, այլ հնարաւորութիւններ գտնէ այնտեղ: Մենք բնականաբար չենք փորձեր փոխարինել Ռուսաստանին եւ Ռուսաստանի գործառույթներուն այստեղ»:

Ինչ կը վերաբերի Հայաստանի գործարար միջավայրին, դեսպան ծոն Հէֆլըրն ըսած է, որ այն պէտք է բարելաւուի, որպէսզի միջազգային ներդրումներու ծաւալներն աճին:

### ՀԱԽ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵ ՏԵՆԻՍ ԶԱՅՆԻ ԵՒ ՄԻՉ ՕՖԵՐՐԸԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԴՂԻ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) պաշտօնական յայտարարութեամբ մը եկաւ իր գորակցութիւնները յայտնելու Մայիս 21-ին տեղի ունեցած քաղաքային ընտրութիւններուն մասնակցող երկու թեկնածուներու եւս:

Լոս Անճելըս քաղաքի ստուգիչի պաշտօնին համար, ՀԱԽ իր գորակցութիւնը յայտարարեց Տէնիս Զայնին, այդպիսով միանալով հանրային պաշտօնեաներու եւ համայնքային ղեկավարներու երկար շարքին, որոնք կը պաշտպանեն անոր թեկնածուութիւնը:

Տէնիս Զայն վերջին 10 տարիներուն եղած է Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ, միաժամանակ ծառայելով որպէս Քաղաքի պահեստի ոստիկան: Նախքան Քաղաքապետական Խորհուրդի անդամ ընտրուելը, ան 33 տարի եղած է Լոս Անճելըսի ոստիկանութեան յառաջապահ զինուորական վրայ: Ան նաեւ, Քաղաքապետական Խորհուրդի իր ամսականներու հարիւր հազարաւոր տո-

լարները նուիրած է տեղական բարեսիրական կազմակերպութիւններուն:

Ներկայացնելով Լոս Անճելըսի 3-րդ ընտրաշրջանը, ան աշխատած է գործատեղեր ստեղծելու եւ տեղական սնտեսութիւնը զարգացնելու ուղղութեամբ: Ղեկավարելով Քաղաքապետական Խորհուրդի հաշուեքննիչ յանձնախումբը ան պայքարած է մսխումի, գեղծարարութեան եւ հարաշահումի դէմ:

Տէնիս Զայն ունեցած է նաեւ երկարատեւ ու արդիւնաբեր կապուածութիւն հարաւային Քալիֆորնիոյ Հայ Համայնքին հետ, աջակցելով ու մասնակցելով համայնքային եւ եկեղեցական բազմաթիւ միջոցառումներու:

«Որպէս Լիբանանցի Ամերիկացի ես ունեցած եմ երկարատեւ յարաբերութիւններ Հայ Համայնքին հետ», ըստ Զայն ու աւելցուց, «Ես հպարտ եմ, որ իմ նուաճումներս եւ խոր կապերս գնահատ-

## ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆՁԻՆՔ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

### ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Եւ այսպէս, կառավարութեան նոր կազմը հրապարակուեց: Մեր մէջ ասած՝ կարող էին նաեւ չհրապարակել, որովհետեւ մեծ հաշուով՝ որեւէ նշանակութիւն չունի, թէ այդ կազմից ով յատկապէս որ նախարարութիւնն է դեկավարելու: Կարող էին նոյնիսկ անուններ չնշել եւ պաշտօնական հաղորդագրութեան մէջ գրել, որ «Մի խումբ անձինք նշանակուեցին նախարարներ»: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր կառավարութիւնը, մեծ հաշուով, հասարակութեան հետ ոչ մի կապ չունի: Եւ եթէ որեւէ նախարար

ուճ, երրորդը վարսաւիրութիւն է անում... Պետութիւնն այդ մարդկանց ոչնչով չի օգնել ու չի էլ օգնելու, պետութիւնը նրանց հետ անընչուճ է միայն հարկեր հաւաքելու «մոմենտով», եւ բնականաբար՝ բոլոր այդ մարդիկ պետութիւնն ընկալում են որպէս ճարձակներ ինչ-որ կառույց, որի հիմնական նպատակը իրենցից հնարաւորինս շատ փող պոկելն է: Հիմա նրանց համար ի՞նչ տարբերութիւն, թէ կոնկրետ ովքեր են իրենցից պլոկած փողը լափելու:

Իսկ ահա Սերժ Սարգսեանը ձեռացնում է, թէ իրականում այդպէս չէ, ինքը լաւ էլ մտահոգուած

Ամբողջ խնդիրն այն է, որ Հայաստանում մարդիկ գոյատեւում են ոչ թէ կառավարութեան ջանքերի շնորհիւ, այլ ի հեճուկս կառավարութեան: Իշխանութիւններն ընդհանրապէս հասարակութեան նկատմամբ որեւէ պարտաւորութիւն չունեն եւ չեն էլ ուզում ստանձնել

րարի ազատում են աշխատանքից ու մի ուրիշին նշանակում, դրանից ուրախանում կամ տիրում են միայն այդ մարդկանց հարազատ-բարեկամներն ու «մօտիկները», իսկ միւսների համար բացարձակապէս միեւնոյն է:

Ամբողջ խնդիրն այն է, որ Հայաստանում մարդիկ գոյատեւում են ոչ թէ կառավարութեան ջանքերի շնորհիւ, այլ ի հեճուկս կառավարութեան: Իշխանութիւններն ընդհանրապէս հասարակութեան նկատմամբ որեւէ պարտաւորութիւն չունեն եւ չեն էլ ուզում ստանձնել: Թոշակ, որպէս այդպիսին, չեն տալիս (որովհետեւ ենթադրում է, որ մարդը պիտի կարողանայ թոշակով գոյատեւել, իսկ սրանց տուածով դա հնարաւոր չէ), աշխատատեղեր չեն ստեղծում եւ աշխատանքով չեն ապահովում (համարում են, որ դա իրենց գործը չէ), անվճար կրթութիւն եւ բուժօգնութիւն չեն ապահովում (դրանք միայն թղթի վրայ են անվճար, այն էլ՝ միայն յատուկ խաւերի համար) եւ այլն:

Հովիւը որ հովիւ է, ոչխարներին կթելուց ու խուզելուց բացի հետեւում է, որ հոտը նորմալ արածի, ձեան ու անձրեւի տակ չմնայ, գայլի բաժին չդառնայ եւ այլն, այսինքն՝ նաեւ որոշակի պարտաւորութիւններ է ստանձնում, իսկ այս իշխանութիւնները միայն կթում ու խուզում են. որը «սատկեց՝ սատկեց», որը փախաւ՝ փախաւ, դա արդէն իրենց մեղքը չէ, այլ հետեւանք է «համաշխարհային ճգնաժամի» եւ «տարածաշրջանային բացասական զարգացումների»: Հասարակութիւնն էլ իր հերթին բացարձակապէս որեւէ ակնկալիք չունի այս կառավարութիւնից: Ասենք՝ Ռուսաստանից ուղարկուող փողով մի կերպ գոյատեւող ընտանիքի համար ի՞նչ նշանակութիւն ունի՝ էկոնոմիկայի նախարարը վահրամ Աւանեսեանն է, թէ՛ (հետու տնից-տեղից) Հրանդ Գեորգեանը: Այդ ընտանիքին արեւի շատ կը հետաքրքրի, թէ ով է Ռուսաստանի էկոնոմիկայի նախարարը: Կամ, ասենք, մէկը տունը գրաւ է դրել, մեքենայ առել ու տաքսի է քշում, մի ուրիշը «Վերնիսաժում» նկար է վաճա-

է ժողովրդի վիճակով եւ նոյնը պահանջում է կառավարութիւնից: Երեկ, օրինակ, նա յայտարարել է, թէ սրանից յետոյ կառավարութեանը չի հարցնելու, թէ ինչ են արել, այլ հարցնելու է, թէ ինչ արդիւնքներ է տուել այդ արածը, ընդ որում՝ արդիւնքները պիտի լինեն չափելի ու տեսանելի: Ուզում է ասել՝ դատարկ խօսելու փոխարէն պիտի այնպէս անէք, որ մարդիկ սկսեն աւելի լաւ ապրել: Բայց որո՞նք են Սերժ Սարգսեանի համար «չափելի ու տեսանելի» արդիւնքները, ինչպէ՞ս է նա տեսնելու, որ մարդիկ աւելի լաւ են ապրում: Մարդկանց հետ անմիջական շփումը կարծես թէ չի ստացւում. կամ «խիչարն է թարս բուսնում», կամ ամէն ինչ աւարտում է «էկել ես ստեղ, լաց ես լինում, որ ի՞նչ անես» թեւաւոր արտայայտութեամբ: Հո չի կարող դերվիշի շորեր հագնել ու ծապուած շրջել Երեւանում: Այդ դէպքում մի 100-120 թիկնապահներ էլ պիտի դերվիշի շորերով ուղեկցեն նրան, որովհետեւ մարդես, մէկ էլ տեսար՝ ճանաչեցին, եւ այդ դէպքում ամէն ինչ կ'աւարտուի արտահերթ նախագահական ընտրութիւններով: Այլ հարց է, որ փոփոխութիւնները «տեսանելի» կարող են լինել նաեւ «Հ1»-ով: Ասենք՝ մարդկանց իմբեր են վարձուում, որոնք էլ ամէն օր հեռուստատեղիներից խօսում են այն մասին, թէ որքան է բարձրացել իրենց կենսամակարդակը կառավարութեան ջանքերի շնորհիւ: Այդ դա կը լինի «տեսանելի» արդիւնք: Ինչ վերաբերում է «չափելի» արդիւնքներին, ապա այստեղ արդէն ազգային վիճակագրական ծառայութիւնը պիտի աւելի լաւ աշխատի: Եւ միշտ բարեբաստիկ թուեր ներկայացնի այն մասին, թէ յատկապէս քանի տոկոսով է աճել մարդկանց բարեկեցութիւնը: Եթէ իրականութեանը չհամապատասխանի էլ՝ ոչինչ: Հայաստանում ի՞նչն է համապատասխանում իրականութեանը, որ դա համապատասխանի: Իրականութեանը համապատասխանելով լինէր՝ Սերժ Սարգսեանը ի՞նչ գործ ունէր նախագահականում:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

## ՀՀԿ-Ն ԱՐԱԳՕՐԷՆ ԿՈՐՑՆՈՒՄ Ե ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

### ՆԱՐԻԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Սերժ Սարգսեանն ընտրութիւններից յետոյ յայտարարել է, որ մէկ տարուայ ընթացքում իշխանութիւնների յաջողուել է Յ խոշոր ընտրական արշաւ կազմակերպել, եւ բոլոր երեքն էլ յաջող են անցել: Այն առումով, որ ընտրութիւնները չեն ուղեկցուել յաւելումներով, ու Սերժ Սարգսեանի վրայ արեան պատասխանատուութեան բեռ չի դրուել: Սակայն բոլոր այս ընտրութիւնները ՀՀԿ վերջի սկիզբն են, եւ արդէն ակնյայտ է, որ մօտակա 5 տարիներին այս կուսակցութիւնը միայն

նրանց վրայ: Հայաստանը բաժանուել է երկու անհաւասար մասերի՝ որոշակի շրջանակներ, որոնք դեռ ենթարկում են իշխող իմբաւորմանը, եւ բնակչութեան մեծամասնութիւնը, որը նախկին ալիքներով այլեւս արիւն չի ստանում, ինչը նշանակում է, որ համակարգի մաս չէ: Լուսանցքային իշխանութիւնը ստիպուած է գնալով աւելի շատ հաշուի նստել նրանց հետ, ովքեր դուրս են եկել վերահսկողութիւնից: Այն գիտի, որ իր իւրաքանչիւր որոշում բարուելու է հզօր դիմադրութեան: Շատ որոշումներ, ելնելով դրա-

Երեւանի Աւագանու ընտրութիւնը դա էլ աւելի վառ է ցուցադրել: Ընտրութեանը «մասնակցել» է երեւանցիների միայն կէսը, որոնց կեսն է «ծայն տուել» ՀՀԿ-ին: Դա նշանակում է, որ կուսակցութեան «ընտրել» է միայն Երեւանի բնակչութեան քառորդ մասը

### Կորցնելու է իշխանութիւնը:

Այն արդէն կորցրել է իր գրեթէ ողջ սոցիալական պլատֆորմը: Նախագահական ընտրութիւնները ցույց են տուել, որ ՀՀԿ գլխաւոր գէնքը՝ վախը, չի աշխատում: 10 խոշոր քաղաքներ, այդ թւում Գիւմրին, ու հարիւրաւոր գիւղեր իրենց ձայնը տուել են ոչ ՀՀԿ թեկնածուին: Նրանք ակնյայտօրէն ցույց են տուել, որ նախկինի պէս չեն վախենում պատժամիջոցներից: Պատճառն ինչ-որ չափով այն է, որ արդէն կորցնելու բան չկայ, սակայն գլխաւոր պատճառն այն է, որ ՀՀԿ իշխանութիւնն արդէն չի տարածուում մինչեւ մագանոթները:

Երեւանի Աւագանու ընտրութիւնը դա էլ աւելի վառ է ցուցադրել: Ընտրութեանը «մասնակցել» է երեւանցիների միայն կէսը, որոնց կէսն է «ծայն տուել» ՀՀԿ-ին: Դա նշանակում է, որ կուսակցութեան «ընտրել» է միայն Երեւանի բնակչութեան քառորդ մասը:

Ընդամենը 3-4 տարի առաջ ՀՀԿ իշխանութիւնը տարածւում էր բոլոր արիւնատար անօթներով՝ մինչեւ Հայաստանի վերջին քաղաքացին: Իւրաքանչիւրի վրայ էլ ճնշման միջոցներ կային՝ մէկինը՝ բիզնեսը, մէկը պետական գործի էր, մէկը որդին էր բանակում: Այժմ ՀՀԿ իշխանութիւնը տարածւում է աւելի նեղ շրջանակի մարդկանց վրայ: Առաջին հերթին, իշխանութիւնը դադարել է «կերակրել» բոլորին՝ սահմանափակուելով նեղ շրջանով, իսկ երկրորդ հերթին, ինչպէս ասում է ոստիկանապետ Վովա Գասպարեանը՝ իրենց բաւարար չեն վճարում, որպէսզի վերահսկեն իւրաքանչիւր քաղաքացու:

Նեղ շրջանակը դեռ բաւարարում է ընտրական մեքենայի աշխատանքն ապահովելու համար: Սակայն կառավարել արդէն չի ստացւում: Վառ օրինակն այն բանի, որ իշխանութիւնն արդէն չի տարածւում ծայրամասերի վրայ՝ Մարց գիւղի դէպքն է, որտեղ մարդիկ ՀէԿ-ի խողովակներն անդունդն են նետել: Յատկանշական է, որ պետութիւնը չի պատժել այդ մարդկանց, որովհետեւ իշխանութիւնն արդէն չի տարածւում

### նից, չեն ընդունւում:

Դա առայժմ շատ նկատելի չէ, որովհետեւ մարդիկ, որպէս կանոն, նկատում են ընդունուած անօրինական որոշումները, որոնք փորձում են իրացնել ի հեճուկս հանրային կարծիքի: Օրինակ, Փակ շուկայի վերակառուցումը: Սակայն ոչ ոք չի կարող հաշուել, թէ որքան որոշումներ չեն ընդունուել, որովհետեւ իշխանութիւնը վստահ է եղել, որ հանրութիւնը կ'ընդվզի:

Ակնյայտ է մի բան նախկին արիւնատար համակարգը չի աշխատում: Օրգանիզմն արեան այլ աղբիւրներ է գտել եւ արդէն կախուած է իշխանութիւնից: «ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱՌԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶՆԱԾԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

### ՐԱՅԱՍԱԼ

## «ԲՅԿ-Ն ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ».- ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը չի կարող լինել ընդդիմութիւն: Մայիս 14-ին Արցախում կառուցուած ՄԲ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծման արարողութեան մեկնարկի ժամանակ, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց այդ կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանը, ուժ միջոցներով է կառուցուած եկեղեցին:



ՄԲ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծման արարողութեանը նախագահ Գագիկ Ծառուկեանը հարցազատուցում կը յարձակի սեղաններու վրայ

«Երեք-չորս ընդդիմադիր կուսակցութիւններ կան եւ հինգ-վեցը պէտք է: Ես քաղաքականութիւն չեմ մտել քննելու, այլ ժողովրդի համար աշխատելու համար», - բացատրել է Գագիկ Ծառուկեանը՝ նշելով, որ կողմնակից է նրան, «ինչն օգուտ եւ ձեռնտու է ժողովրդին»:

Յիշեցնենք, որ ԱԺ «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանն անդրադառնալով Հայաստանում առկայ քաղաքական մենաշնորհներին նշել էր, թէ ԲՀԿ-ն պէտք է ԱԺ սեպտեմբերեան նստաշրջանում փոխի իր քաղաքական կարգավիճակը եւ իրեն ընդդիմութիւն հռչակի:

ՄԲ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծման արարողութեանը հրաւիրուած էր ողջ քաղաքական վերնախաւը՝ ՀՀ երեք նախագահների գլխավորութեամբ, ինչպէս նաեւ ՀՀ-ում հաւատարմագրուած դիւանագիտական կորպուսն ու արտասահմանեան հիւրերը՝ այդ թւում եւ այս օրերին պաշտօնական այցով Հայաստանում գտնուող Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն:

Եկեղեցու շուրջ հաւաքուած էր 20 հազարի չափ մարդ: Հայաստանի եւ Բելառուսի Հանրապետութեան նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Ալեքսանդր Լուկաշենկոյի միջակայքը կը յարմարէր սեղաններին:

## «ԵՌԹ ՆԵՐԳԱՐԹ ՉՈՒՆԵՆԱՅԻՆՔ, ՐԱՖՅԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԸ Ո՚ՆՅ ՊԵՏՔ Է ՐԱՅԱՍԱՆՈՒՄ ԼԻՆԵԻՆ».- ԳԱԼՈՒՍՏ ՍԱՐԱԿԵԱՆ

Քանի մեր երկիրը վտանգուած է, ունենք ազգային, պետական ինդիւրներ, բնական է, Հանրապետականը պէտք է իշխի: Այս մասին Մայիսի 13-ին, լրագրողների հետ հանդիպման ասաց ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը: Նա կարծիք չափանց, թէ ՀՀԿ-ն ղեռ անելիքներ ունի, եթէ մէկ այլ քաղաքական ուժ լինէր, ապա Ղարաբաղը կը տար թշնամուն:

Դիտարկմանը, թէ հասարակութեան վրայ կրակում են, նա հակադարձեց, թէ սովետական տարիներին իրենց վրայ էլ էին կրակում: Պատգամաւորի կարծիքով՝ հասարակութեան մօտ ՀՀԿ-ին իշխանութիւնից հեռացնելու գաղափարը կը լինի, եթէ Փոքր Մհերը դուրս գա ժաշտից: «Հասարակութեան խորհրդանիշը Փոքր Մհերն է, որը մեզ մօտ է, բաց ղուր չէք տեսնում», - ասաց նա:

Խմբակցութեան ղեկավարն ասաց, որ իշխանափոխութիւն լինում է, երբ հասարակութիւնը ոտ-

կաշենկոյի ժամանման պահին, «ՀՀԿ-ական տատիկը» տեղից գոռաց՝ «կեցցէ ապահով Հայաստանը», ինչը ակնյայտօրէն դուր եկաւ Սերժ Սարգսեանին, ով ժպտաց այս խօսքերի վրայ:

Արցախում կառուցուած ՄԲ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծման արարողութեան աւարտից յետոյ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանը հիւրերին՝ Բելառուսիայի նախագահին Ալեքսանդր Լուկաշենկոյին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, Ռոբերտ Գոչարեանին ճանապարհեց եւ ապա կաթողիկոսի հետ մօտեցաւ նախապէս բացուած սեղաններին:

Արգելապատնէշներից այն կողմ հաւաքուած բազմութեան բարեմաղթանքները ստանալուց յետոյ, գինով միմեանց շնորհաւորեցին եւ ապա տանտիրոջ նման յանձնարարեց, որ պատնէշները բացեն եւ մարդկանց թոյլ տան օգտուել սեղաններից:

Դեռ էջը հասցրել հեռանալ, երբ մարդիկ իրար հրմշտելով յարձակութեցին սեղանների վրայ: Մի մասը ուտելիքները պաշտօնակներում էին տեղաւորում: «Մի նկարէք, ամօթ ա», - սեղանից հեռու գտնուող մի կին ինդրեց՝ իրավիճակից վատ գզալով: Սակայն նա միակը չէր, որ վատ էր գզում մարդկանց նման վարքից:

քի է կանգնում, իսկ այժմ քաղաքական ուժերն արհեստական հասարակութեանը ոտքի են կանգնեցնում, որ կարողանան ուղղորդել:

Գալուստ Սահակեանը նաեւ կարծիք չափանց, թէ ընդդիմութիւն չկայ, ընդդիմադիրներից ամէն մէկը մի բան է ասում, չեն կարողանում միասնական հանդէս գալ, զրոյացրել են իրենց, ինչի արդիւնքը նախագահական, խորհրդարանական, աւագանու ընտրութիւններն էին: «Մենք ուրախացել ենք, որ Րաֆֆին 37 տոկոս ձայն էր վերցրել, բաց ընդդիմադիր լինելը նշանակում է Ազատութեան հրապարակում մեծ-մեծ խօսել, ժողովրդին տրամադրել, յետոյ բողոքել, որ արտագաղթ կայ, ներգաղթ չկայ: Եթէ ներգաղթ չունենայինք, Րաֆֆին եւ Վարդանը ո՞նց պէտք է Հայաստանում լինէին (նկատի ունի Րաֆֆի Յովհաննիսեանին եւ Վարդան Օսկանեանին-խմբ)», - նկատեց նա՝ յաւելելով, որ արտագաղթը պէտք է ցաւով ընդունել, բաց ոչ ցաւագին:

## ՆԱԽԿԻՆ ԳՅՇ-ԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄ ԵՆ ԳՅՇ-Ի



Նախկին ՀՀԾ ներկայացուցիչները կը յայտարարեն մեր ՀՀԾ-ի կազմաւորումը

Հայ ազգային կոնգրէսից տարածաշրջանները պատճառով հեռացած նախկին ՀՀԾ ներկայացուցիչներ Արարատ Զուրաբեանը, Ալեքսանդր Արզումանեանը, Յովհաննէս Իգիթեանն ու Կարապետ Ռուբինեանը նախաձեռնել են նոր Հայոց համագալին շարժում կուսակցութեան կազմաւորումը, կամ իրենց ձեռակերպմամբ՝ ՀՀԾ-ի վերագրանցման գործընթացը:

Ինչպէս նախաձեռնողները յայտարարեցին Մայիս 14-ին լրագրողների հետ հանդիպմանը, կուսակցութեան վերագրանցման համար դիմել են արդարադատութեան նախարարութիւն:

Վերջին 5 տարիներին ՀԱԿ դաշինքին մաս կազմած ՀՀԾ կուսակցութիւնը այս տարուայ Փետրուարի 23-ի համագումարում վերանունակեց Հայ ազգային կոնգրէս կուսակցութեան:

Յայտարարելով, որ այդ օրը աւարտին է հասցուել Հայոց համագալին շարժում կուսակցութեան կազմաւորման գործընթացը, Արարատ Զուրաբեանը, Ալեքսանդր Արզումանեանը, Յովհաննէս Իգիթեանն ու Կարապետ Ռուբինեանը «կուսակցութիւնը վերագրանցելով եւ պահպանելով ՀՀԾ պատմական

անունը» պատրաստակամութիւն են յայտնում «վերականգնել սահմանադրական կարգը Հայաստանում, համել ժողովրդավարական եւ ազատական արժէքների հաստատմանը»: Իրենց յայտարարութեան մէջ այս անձինք յիշեցնում են, որ «հանդիսանալով Հայոց համագալին շարժման ակտիւ մասնակիցներ շարժման առաջին իսկ օրերից, լինելով կուսակցութեան հիմնադիր անդամներ, իրենց անհամաձայնութիւնն են յայտնել ՀՀԾ-ն քաղաքական ասպարէզից վտարելու, արհեստածին միաւորով այն քողարկելու եւ ստուերելու փորձին, դա համարելով հրաժարում որդեգրած գաղափարախօսութիւնից ու սկզբունքներից, ոսնձգութիւն մերօրեայ պատմութեան դէմ»:

Ալեքսանդր Արզումանեանը տեղեկացրեց, որ Մայիսի 2-ին «Ազատ Դեմոկրատներ» կուսակցութիւնից դուրս գալու դիմում է գրել: Նա պատգամաւորական գործունէութիւնը կը շարունակի «Ժառանգութիւն» խմբակցութեան կազմում, քանի որ Ազգային ժողովի կանոնակարգ օրէնքում չկայ խմբակցութիւնից դուրս գալու որեւէ նորմ՝ որեւէ այլ քաղաքական ուժի յարելու համար:

## ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԸ ԹՈՇԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՆ ՊԱՐԱՆՁՈՒՄ

21 տարի առաջ Ղարաբաղեան պատերազմի ժամանակ Մարտակերտում ոտքը կորցրած Լեւոն Կարապետեանը առաջին անգամ չէ, որ բողոքի երթի է մասնակցում: 60-ն անց ազատամարտիկը այսօրի երթերի մասնակցութեան մեծ փորձ ունի, միակ տարբերութիւնը այն է, որ այս դէպքում մարտական ընկերների հետ է:

Մայիս 13-ին մօտ 50 ազատամարտիկներ Ազատութեան հրապարակից բողոքի երթով շարժուեցին կառավարութեան շէնք՝ իրենց պահանջներով նամակը իշխանութիւններին յանձնելու համար: Երկու յենակների օգնութեամբ շարժուող Կարապետեանը կատակեց, որ իրեն քայլելը դժուար է, քանի որ երեք ոտք ունի: Ղարաբաղեան պատերազմի վետերանները բողոքում են, որ ներկայիս կենսաթոշակով չեն կարողանում ապրել եւ պահանջում են բարելավել իրենց սոցիալական պայմանները:

«Ներկայիս զենքի պայմաններում իմ թոշակը շատ չնչին է՝ 65 հազար դրամ», - ասաց ում է

Կարապետեանը:

Վետերաններն այժմ մօտ 40-80 հազար դրամ կենսաթոշակ են ստանում, պահանջում են, որ կենսաթոշակի չափը հասցուի 100-200 հազար դրամի:

Ամէն ինչ սկսուեց Մայիսի 11-ին, երբ պահեստագործի գնդապետ, ազատամարտիկ Վոլոդիա Աւետիսեանը Ազատութեան հրապարակում նստացոյց սկսեց՝ պահանջելով որպէսզի պետութիւնը ուշադրութիւն դարձնի ազատամարտիկների կենսաթոշակի հարցին, քանի որ իրենք չեն կարողանում գոյատեւել ներկայիս թոշակով: Նստացոյցի արդիւնքում Ազատութեան հրապարակում տանեակ դժգոհ ազատամարտիկներ յայտնուեցին, ինչից յետոյ նրանք ստորագրահաւաք կազմակերպեցին եւ դիմումի հետ որդեգրեցին յանձնել կառավարութիւն:

Նամակը յանձնելուց յետոյ պահեստագործի գնդապետը ասաց, որ կը սպասեն իրենց պահանջների պատասխանին, իսկ եթէ դրանք չբաւարարուեն, ապա իշխանութեան ակտի բարձր մարմինների կը բողոքեն:

ԼՈՒՐԵՐ

ԲԻԶՆԵՍ ՄԻՋՎՎԱՅՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՆԱԿ «ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ»

Վերջին 10 տարում Եւրամիութիւնը եւ Վերակառուցման եւ զարգացման եւրոպական բանկը (ՎԶԵԲ) 900-ից աւելի փոքր ձեռնարկութիւնների մինչեւ 10 հազար դոլար դրամաշնորհներ եւ բիզնես խորհրդատուութիւն են տրամադրել՝ նպատակ ունենալով Հայաստանում զարգացնել փոքր բիզնեսը:




ԵՄ պատուիրակաւոր ղեկավար, ղեկավար Ծրագրի ղեկավար

բիզնեսի զարգացումը ԵՄ գերակայութիւններից մէկն է:

«Պէտք է զարգացնել երկրում փոքր բիզնեսը, միայն այդ դէպքում Հայաստանը կը կարողանայ լիարժէք կերպով օգտուել Եւրամիութեան ընձեռած հնարաւորութիւններից», - ասաց ղեկավարը ԵՄ հետ պատրաստուած համաձայնագրի շրջանակներում:

«Փոքր բիզնեսի աճը շարունակելու եւ պահպանելու համար հարկաւոր է, որպէսզի հայաստանեան իշխանութիւններն իրենց դերակատարութիւնն ունենան բիզնես միջավայրի բարելաւման եւ օրէնսդրութեան կարգաւորման հարցում: Սա կը լինի Հայաստանի համար անկիւնաքարային զարգացում, որովհետեւ թոյլ կը տայ աւելի խորը ներդրուելու եւ աստիճանաբար ինտեգրուել եւրոպական շուկային», - նշեց Հրիսթեան:

Է. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.- «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ»



Էդուարդ Նալբանդեան եւ Լորան Ֆարիուս Փարիզի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Մայիսի 13-ին Փարիզում պաշտօնական այցելութեամբ գտնուող ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆարիուսի հետ:

ԱԳ նախարարի ծառայութիւնից յայտնուած է, որ Էդուարդ Նալբանդեանը նշել է, որ Ֆրանսիայի եւ Հայաստանին միաւորում են առանձնաշնորհալ յարաբերութիւնները, որոնք խարսխուած են հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների աւանդական բարեկամութեան վրայ, եւ բնական է, որ ԱԳ նախարարի պաշտօնում վերանշանակուելուց յետոյ նա իր առաջին այցելութիւններից մէկը կատարում է բարեկամ Ֆրանսիա:

Նախարարները գոհունակութեամբ արձանագրել են, որ երկկողմ փոխյարաբերութիւնները վերջնական զարգացում են ապրում, առկայ է բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւն, ձեւաւորուած է լայն իրաւապայմանագրային դաշտ, ֆրանսիական ընկերութիւնները զգալի ներդրումներ են կատարել Հայաստանի տնտեսութեան մէջ, ակտիւ համագործակցութիւն է ընթանում գիտակրթական եւ մշակութային ոլորտներում:

Նախարարներ Նալբանդեանն ու Ֆարիուսը ընդգծել են տնտեսական ոլորտում համագործակցութեան ընդլայնման կարեւորութիւնը: Այդ համատեքստում նախարար Նալբանդեանը շեշտել է, որ Հայաստանը ողջունում է ֆրանսիական ներդրումների աճը:

Եւ այդ ուղղութեամբ նոր նախաձեռնութիւնները:

Հայաստանի եւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարներն անդրադարձել են տարբեր բնագաւառներում երկկողմ համագործակցութեան հետագայ զարգացման ուղղութեամբ ձեռնարկուելիք քայլերին:

Հանդիպման անդրադարձ է կատարուել Հայաստան-Եւրոպական միութիւն յարաբերութիւններին, Եւրոպայի խորհրդում Հայաստանի ստանձնելիք նախագահութեանը, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան շրջանակներում փոխգործակցութեանը:

Բանակցութիւնների օրակարգում էր արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացը: Էդուարդ Նալբանդեանը, բարձր գնահատելով Ֆրանսիայի կառուցողական ներգրաւուածութիւնը որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր, վերահաստատել է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ շարունակելու Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ ջանքերն ուղղուած հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորմանը:

Հայաստանի եւ Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարները մտքեր են փոխանակել միջազգային օրակարգի մի շարք հարցերի շուրջ, անդրադարձ կատարուեց իրանի միջուկային ծրագրին, սիրիական ճգնաժամի լուծման նպատակով ձեռնարկուող ջանքերին:

ԱՐՄԱՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ.- «ՄԻՐԱՀԱՅԵՐԻՆ ՄԱՍՍԱՅԱԲԱՐ ՊԷՏՔ Է ՏԵՂԱՅԱՆԵԼ»

Միրիայի նախագահ Բաշար ալ Ասադի գնալուց յետոյ, եթէ իշխանութեան գլուխ գան ծայրայեղ իսլամիստները, շատ հնարաւոր է «Բարդուղիմեոսեան գիշեր»-ը կրկնուի: Լրագրողների հետ հանդիպմանը նշեց Լիբանանում նախկին արտակարգ եւ լիազօր ղեկավար Արման Նաւասարդեանը:



Նախկին ղեկավար Արման Նաւասարդեան

Թեանը, եթէ յետոյ կոտորուենք, կը նստենք, լաց կը լինենք, որ 1915թ. կրկնուենք»:

Ինչ վերաբերում է հայկական դիւանագիտութեանը, ապա, նրա կարծիքով, այն պէտք է լինի ազրեւսիայի հասնող ակտիւ. «Անցնող տարիները ցոյց տուեցին, որ պասիւ դիւանագիտութիւնը գոնէ ԼՂՀ հարցում բերեց իր վատ հետեւանքները»:

Պարոն Նաւասարդեանը համաձայն է ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի այն կարծիքի հետ, որ ստանձնելով ԵՄ նախագահների կոմիտէի նախագահութիւնը, պէտք է ձեռնպահ մնալ ԼՂՀ հարցի քննարկումներից այդ ամբիոնից, քանի որ կայ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափ: «Դիւանագիտութիւնն այնպի-

ԹՈՒՐԲՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած է 1-էն

ներկայի գործընթացի ձախողման պարագային փոքրամասնութիւններու հանդէպ նոր բռնաճնշումներու հաւանականութիւնը:

Վերձիհան Զիֆլիօղլու յայտնած է, որ առաջին անգամ

ըլլալով, փոքրամասնութիւններու ներկայացուցիչները արմատական պահանջներ կը ներկայացնեն Թուրքիոյ իշխանութիւններուն:

Յանձնաժողովը իր գեկոյցը Թուրքիոյ իշխանութիւններուն պիտի ներկայացնէ Յունիս 14-ին:

սի հնարաւորութիւններ ունի, որ պէտք է օգտագործել բոլոր հնարաւոր առիթներն ու միջոցները, նոյնիսկ անթոյլատրելի, որպէսզի աշխարհին հասցնենք մեր

ասելիքը: Ի դէպ, ԼՂՀ հարցը Ադրբեջանը բարձրացնում է անգամ այնպիսի երկրներում, որոնք ընդհանրապէս քարտէզից էլ գաղափար չունեն», - ասաց նա:



## ԱՆԲԱՍԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ՝ ԱՐԳԱՍԱԲԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՍԲ ԿԵԱՆՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՅԱՆԴԵՍ )

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մեզ պարտադրուած սիրւութեան կեանքը ցեղասպանութեան կոտորածներէ հետեւանքով սակաւ առ սակաւ շունչ եւ արիւն ստացաւ, փիւրկեր յառնեց մոխիրներէից, թեւեր առաւ եւ ճախրել սկսեց շնորհիւ անվեհեր եւ նուիրեալ ազգային ու հասարակական գործիչներէի, որոնք գիշերը ցերեկին խառնած հիմնադրեցին միութիւններ, ակումբներ, կառուցեցին դպրոցներ, եկեղեցիներ, եւ այսպիսով հայկական կեանքը նորովի ընթացք առաւ, կեանքը հունի մէջ մտաւ հայրենական երկրից հեռու՝



Արուսեակ Գրիգորեան

տեղահանուած, մաշուած ու հիւծուած, մագապուրծ փրկուածների համար մի շարք իսլամ եւ քրիստոնեայ ասանջական ակերտում: Զարդարար ոճրագործները որոշել էին հայութիւնը ի բնէ վերջ տալ, կէսին տեղահան անելով կոտորեցին, իսկ միւս կէսին եւս վերացնել, սակայն հայկական միասնական ուժից ջախջախուելով նահանջեցին եւ եղեւ յաղթութիւն ու փրկութիւն ամբողջական Հայաստանից մի պոլսոս հոգամասի վրայ:

Այդ նուիրեալ գործիչներէից մէկը, իր ժամանակին, եղաւ Բեն-իամին ժամկոչեանը, որը Չարդի ճանապարհներում կորցրած ամէն բան՝ հայր, եղբայրներ եւ հարազատներ, մօր միջոցով յանձնուած է որբանոցի, ուր ուսում է ստանում, ուսուցչական ճիւղն է աւարտում ու երկար տարիներ հայ սերունդներ է կրթում եւ դաստիարակում: Նա իր գրքի 381 էջում գրում է՝ «...յաջոնցի թէ տասը կեանք ալ ունենամ, տասն ալ ուսուցչութեամբ պիտի անցընեմ»: Նրա սան-սանուհիներէից շատեր աշխարհի տարբեր երկրներում երեւելի մարդիկ դարձած ծառայում են հայութեան իրենց ուսուցչապետ տնօրէնից սովորելով:

Նա իր ժամանակին եւ մահից յետոյ մեծապէս գնահատուել է արժանանալով Սրբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանի Խորհրդային Հայաստանի Մշակութի կոմիտէի կողմէից, ապա այն բազմաթիւ ներբողական յօդուածների եւ գրութիւնների, որոնք իր հարազատների, ճանաչողաց, սաների կողմէից որպէս երախտագիտական դասանապաստաններ նուիրուել են երախտաշատ ուսուցչապետ տնօրէնին:

Տնօրէնը գրի էր առել իր կենսապատումը, չէր յաջողել հրատարակել, սակայն իր սաներից՝ գիտնական Արի Թօփուղխանեանի միջոցով կազմուելով, խմբագրուել եւ հրատարակուել է Բէյրութի



Տօթ. Արշակ Գազանեան

«Սահակեան» վարժարանի նախկին Սաների միջոցով 2010 թուականին նուիրուած նրա ծննդեան 115 ամեակին: Գիրքը խորագրուել է՝ «Յուշարձան Ուսուցչապետ Բեն-իամին ժամկոչեանի » բաղկացած 581 էջերից շատ ընտիր տպագրութեամբ լատիկացմ: Գրքի սրբագրութիւնը կատարել է Պէպօ Սիմոնեանը, նախաբանը գրել է՝ Գրիգոր Զանիկեանը: Գրքի սկզբում դրուած է նրա հեղինակած գրքերի ցանկը, իսկ վերջի բաժինը ընդգրկում է մամուլի եւ տասնեակից աւելի խմբագիրների, սան-սանուհիների եւ անձնաւորութիւնների յօդուածներ:

Ահա այս արժէքաւոր գրքի շնորհանդէսն էր կազմակերպուել՝ «Կալիֆորնիայի Սահակեան սասնուց» միութեան վարչութեան կողմէ:



Տօթ. Համբիկ Սարաֆեան

մից Մայիս 10, 2013-ին երեկոյեան ժամը 7-ին Կլեմտէյլի հանրային գրադարանում:

Գեղեցիկ օր էր ընտրուել, Մայիսեան գեղածիծաղ օրերից մէկը, ամէն կողմ ծիւ ու ծաղկունք: Հանդէսը ունեցումով սկսուեց, նրանով հանդերձ որ Տնօրէնը բծախնդիր ժամանակաշատ մէկին էր՝ ամէն գործ նշուած ժամին սկսելու համար:

Նախ դահլիճը յոտնկայս երգեց «Սահակեան»-ի քայլերգը, ապա հանդէսի մեկնարկումը կատարեց միութեան անդամ՝ ազնուափայլ տիկ. Արուսեակ Գրիգորեանը, ողջունելով սահակեանների եւ հիւրերի ներկայութիւնը նա հակիրճ բառերով անդրադարձաւ հանդէսի բնոյթի մասին շեշտելով երկու աւելիները՝ « Առաջինը՝ մեզի համար աւանդութիւն դարձած Մայիս 10-ի «Սահակեանի օրը», երկրորդ՝ գրքի մասին անդրադառնալու նպատակով...»: Այնուհետեւ տիկինը ներկաներին տեղեկացրեց միութեան կատարած աշխատանք-

ների ու նպատակների մասին՝ երկու «Սահակեան» վարժարանների՝ Բէյրութում եւ Երեւանում: Նա իր խօսքն աւարտեց ասելով՝ « Անցնող 10 տարիները ընթացքին կարգ մը սահակեանցիներ յաւերժ բաժնուեցան մեզմէ եւ անոնց հարազատներուն փափագին համաձայն փոխան ծաղկեպսակի գոյացած գումարները հոգացին մեր դպրոցի կոտորուած պատուհաններու նորոգութեան»:

Տիկ. Արուսեակը նաեւ որպէս հանդիսավար բեմ հրաւիրեց յարգարժան դոկտ. Համբիկ Սարաֆեանին՝ «Սահակեան»-ի շրջանաւարտներից, հասարակական գործիչ, Ս.Գ.Հ.Կ. կենտրոնական վարչութեան անդամ, որպէսզի սրտի խօսք ասելու: Յարգելի դոկտորը շատ բովանդակալից, սակայն ամփոփ ներկայացրեց Բ. Ժամկոչեան հայ-մարդը, տնօրէնը եւ հասարակական գործիչ կուսակցականը: Նա



Տօթ. Գեորգ Քեչիշեան

գրքի կապակցութեամբ ասաց՝ « Երբ կարդացի «Յուշարձան...» գիրքը 150 աստիճան մօտեցումս փոխուեցաւ տնօրէնի հանդէպ...Այս մարդը կարելի է ասել ապրած է հերոսական կեանք...Նա ունեցած է ամենադժուար կեանքն ու պատմութիւնը հայ ժողովրդի ամենաճակատագրական ժամանակահատուածի տեղի ունեցած բոլոր հանգրուաններին...»: Նա իր խօսքի շարունակութեան ընթացքում գրքի մասին ասաց՝ « ...Ափսո՛ս, շատ ափսո՛ս, որ ուշադրութիւնը նրա հանդէպ այսքան ուշ է մտածուել, այդուհանդերձ, անշուշտ շնորհակալութիւն պիտի յայտնել պրոֆ. Արի Թօփուղխանեանին...Գիրքը պատմավաւերական արժէք է ներկայացնում...»:

Լսարանին ներկայացուեց Տօթ. Արշակ Գազանեանը՝ «Սահակեան»-ի սան եւ ուսուցիչ, վաստակաշատ ազգ.-հասարակական եւ քաղաքական գործիչ, «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր, գրքերի հեղինակ գրող, «Յուշարձան...» գրքի ներկայացումը կատարելու: Յարգելի դոկտորը հանգամանօրէն ներկայացրեց գիրքը շեշտելով նրա պատմական, հայրենասիրական, ազգ.-հասարակական, հեղինակի կրթաուսումնական գործունէութիւնը, կոտորածի արհատաւարականները: Նա իր պատրաստած գրախօսականը ըստ գրքի բովանդակութեան բաժանած էր չորս պոլսոսների՝ 1. Որբը 2. Որբանոցը 3. Յեղափոխական գիւնորը 4. Յեղափոխական գիւնորը

դ.- Ուսուցիչը Չորս պոլսոսների մասին անշուտ-անշուտ լայն բացատրութիւններով է ներկայացուել, հեղինակի խօսքերից մէջբերումներով, որպէս ապացոյց գրուածի եւ կատարուածի:



Նազարէթ Գեռնեան

Յարգելի Տօթ. Գազանեանը իր գրութիւնը եզրակացնում է հետեւեալ վերջաբանով՝

«Ժամկոչեանի լեզուն պարզ, անմիջական, պատկերաւոր, ճոխ եւ սահուն գրելաճ է՝ հարուստ բառամթերքով:

«Գիրք ընթերցողը հանդիսատես կը դառնայ այդ ժամանակաշրջանի հայ մարդու առօրեայ կեանքին, ընտանեկան վիճակին, ընկերութեան տաղանայներուն, գաւառային աւանդութիւններուն, սովորութիւններուն, գրկանքներուն, խօսելաճին...Երեւակայութեամբ մասնակից կը դառնայ տեղահանութիւններուն, Չարդիէն մինչեւ ցեղասպանութեան գոհ գացած հարազատներուն ողբերգական կոտորուածին պատճառած անսփոփելի վշտին»:

«Ժամկոչեանի սան-սանուհիները ընթերցելով գիրքը պիտի վերապահ իրեն հետ ապրած անցեալի կեանքը: Զինք մօտէն կամ հեռուէն ճանչցողները իրենց յիշուութեան մէջ պիտի վերականգնեն ժամկոչեան արդարադատ, ճշմարտախօս եւ ուղղամիտ մարդը, իսկ անձանօթ ընթերցողը պիտի ճանչնայ ազգին, հայրենիքին նուիրեալ հայը»:

Բեմ հրաւիրուեց պրն. Խաչիկ Թաշճեան:

Նա որպէս «Սահակեանի» սան յուշեր պատմեց վարժարանի եւ տնօրէնի մասին, ապա հրաշալիօրէն արտասանեց Սիլվա կապուտիկեանից քերթուած նուիրուած երեւանին՝ ...եւ արժանացաւ ներկաների ծափերին:

Այնուհետեւ ելուցթի հրաւիրուեց դոկտ. Գեորգ Քեչիշեանը՝ ազգ.-հասարակական վաստակաւոր գործիչ, հրատարակագիր եւ գրքերի հեղինակ: Նա որպէս «Սահակեան»-ի նախկին ուսուցիչ ակնաստեսի վկայութեամբ դպրոցի, տնօրէնի, սան-սանուհիների մասին իր տեղեկութիւնները հակիրճ փոխանցեց դահլիճին: Մեծարգոյ դոկտորը իր խօսքի վերջում այսպէս բնութագրեց Բ. Ժամկոչեանը՝ «Նա որպէս բարձր նկարագրի տէր, վաստակաւոր դաստիարակ, որպէս ճշմարտ հայրենասէր արժանի է մեր անկեղծ գնահատանքին, սանասման սիրոյն եւ անխառն երախ-

### ՉԱՐԻՆ ՎԵՐՋՈՒ

#### ԱԻՆՏԻՍՏՈՒՋՄԻԿ

Նացիզմ-ֆաշիզմ չարահասարակորենակիր ջախջախիչ պարտություններով կրկրորդ աշխարհամարտի աւարտին, փրկություն եղաւ ողջ մարդկության համար: Աննախադէպ այս պատահարը, մարդկությունը նետեց պատերազմի դեհնային բոցերու մէջ՝ արժելով միլիոնաւոր մարդկանց կեանքը, քանդելով տարածքներ եւ մշակութային գանձեր, որբացնելով մանուկներ եւ աչրիացնելով մայրեր, խեղանդամ դարձնելով երիտասարդ կեանքեր եւ կործանելով բազմաթիւ երկիրներու տնտեսություններ:

Հիթլեր-Մուսոլինի տգեղ զինակցութիւնը, ամենայն սառնասրտութեամբ արեան բաղնիքի վերածեց երկրագունտը՝ ինչ որ ցնորական ծրագիրներու իրագործման համար: 20րդ դարու երկրորդ համընդհանուր պատերազմին բեռն ու ամբողջական պատասխանատուութիւնը, անկասկած ինկած է երկզրանի այս չարիքին վրայ: Այս օրերուն, կը նշուի չարիքի պարտութեան տարեկարծը: Աւելի ստոյգ՝ յաղթանակի օրը, երբ խորհրդային զօրքեր խոյացան Պերլին՝ իր սաղմին մէջ խեղդելու Հիթլերն ու Հիթլերական տմարդութիւնը:

1945 Մայիս 9-ի յաղթանակի օրը, համագոր է մարդկության փրկութեան օրուան, որովհետեւ չարիքի տիրապետութեան պարագաներուն, ոչ ոք կրնար կռահել, թէ ինչպիսի՞ ընթացք պիտի ունենար պատմութիւնը: Չարիքի դէմ պայքարը հանդիսացաւ համընդհանուր զօրաշարժ մը, քանի ան կը շեշտէր ատելավառութիւնը, ցեղամորթութիւնը, թշնամանքն ու վայրագութիւնը:

Հիւանդագին գաղափարախօսութեան մը չար արգասիքն էր այդ պատերազմը՝ իր կործանարար հետեւանքներով, չսպիացող վէրքերով եւ չարայուշ դրուագներով:

Մեզի աւանդուող հեքիաթներուն մէջ, ինչ գոհունակութեամբ կը սիրենք լսել չարիքի պարտութեան մասին: Կը սպասենք, որ չարը պատժուի, ունենայ անփառունակ վախճան: Չարին վերջը պէտք է որ ըլլայ անամօթ խորտակումը եւ ընդմիջտ տապալումը:

Նոյնը չէ՞ մեր կեանքին մէջ. նոյնը չէ՞ պատմութեան եւ քաղաքականութեան մէջ:

Ինչպէս ըսինք, նացիզմ- ֆաշիզմ սաղայէլական երկուորենակիր

զգետնումը համամարդկային տօն է: Սակայն, ան առաւել տօն է հայութեան համար, որովհետեւ անոր խորտակման մէջ մեր փոքրաթիւ ժողովուրդը եւ փոքր հայրենիքը ունեցան անհամեմատօրէն իրենց զգալի ներդրումը: Խորհրդային զօրքերուն հետ հայկական գոմարտակիրն մուտքը Պերլին, «Քոչարի» պարով ելուցիւր հոն եւ հայ ռազմիկին յաղթական ներկայութիւնը Ռայխսթակի վրայ, կ'ապացուցեն, որ հայը մարտնչեցաւ մարդկային բարիքին համար, ուզեց որ չարը ունենայ իր արժանի վերջը:

Ուշագրաւ է ընդգծել, որ Հիթլերականութեան ջախջախման մէջ ոչ միայն խորհրդային բանակի հայ զինուորականները ցուցաբերեցին դիւցազնական սիրանքներ, այլ՝ ամերիկեան, ֆրանսական եւ բրիտանական շարքերուն մէջ կամաւորագրուած թէ շարքային ռազմիկներ. աւելին, սփռուքահայ զանգուածներ նիւթական օժանդակութեամբ կեանքի կոչեցին «Սասունցի Դաւիթ» հրասայլային շարասիւնը, որպէս մասնակցութիւն գերման ճիւղին չէզոքացման պարտականութեան: Ինչո՞ւ հայը անվերապահօրէն որոշեց իր արիւնը խառնել հակաֆաշական արիւնալի գուպարին. ինչո՞ւ ան վճռակամութեամբ սլացաւ Պերլին՝ թշնամիին մահաբոյր օրը:

Այստեղ պէտք է փնտռել Մեծ Եղեռնէն մնացած ռիսն ու վրէժը. թուրք-գերման զինակցութեան ուղղուած ռազացած պատասխանը. արդար ու բնագրային զայրոյթի մը արտայայտութիւնը:

Հայը գերման ոսոխին ընդմէջն կը տեսնէր ցեղասպան թուրքը: Ան բռնագրաւեալ հայրենիքին փոխհատուցման պատեհ առիթը կը նկատէր Պերլին ներխուժումը: Նոյնիսկ, ունէինք այն հաւատքը, որ ֆաշիզմի ջախջախումով, պիտի վերագծուի Հայաստանի քարտէզը եւ Արեւմտեան Հայաստանի տարածքները Երկրորդ Աշխարհամարտին հոք պիտի կցուէին մայր հողին:

Ափսոս... 1945 Մայիս 9-ին չարը ունեցաւ իր վերջը: Բայց մնաց... չարիքը. այս անգամ նէօֆաշիստներ, նոր գոյնի ու ձեւի ցեղամուրներ, ֆաշականութեամբ սնանող նորերուկներ, որոնք նոյնպիսի կատաղութեամբ կը պղտորեն մարդկութեան կեանքը, բնականոն ու խաղաղ ընթացքը:

Շարք էջ 18

### ՔԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Վերնագիրը գրեցի այնպէս, ինչպէս գրում էր Արամ Հայկազը. Հայրենիք բառը՝ մեծատառով: Արամ Հայկազ հայի համար Հայրենիքը Արեւմտեան Հայաստանն է, ծննդավայրը՝ հերոսական Շապին Գարահիսարը, որի ինքնապաշտպանութեանը մասնակցել է 15-ամեայ պատանին: Այդ օրերի մասին նա պատմելու է յետոյ, երբ գրկուած էր Հայրենիքից:

Նիւր Երրճ քաղաքում ապրող Արամ Հայկազը հայ է, Հայրենիքը նրա արեան մէջ է, ապրելու ձեւն է, յիշողութիւնը, կսկիծը... Եթէ ուզում ես պեղել եւ հասկանալ հայի հոգեբանութիւնը, առատ նիւթ կը գտնես Արամ Հայկազի ստեղծագործութիւններում, նամակներում: Հայը՝ տուն սիրող է: Տուն, որ Հայրենիքի մանրակերտն է եւ սրբավայրը. «Տունը ինձի համար, ինչպէս նաեւ քաղաքակիրթ մարդոց մեծամասնութեան, Արամ Հայկազի «Ապրող ծառ մը» եկեղեցիի չափ նուիրական վայր մըն է» («Կարօտ»): նորատիպ հատորի շապիկը ուրեմն՝ տուն, ծառ, ծաղիկ, նաեւ հաց: Պատմուածքներից մէկում Հայկազը պատմում է, թէ ինչպէս է Ամերիկան հսկայ խանութում տեսել ընտիր ցորեն, մի բուռ գրպանել, ցանել իր փոքրիկ պարտէզում՝ վարդերի ոտքերի տակ, ու օր օրի սպասել ու հրճուել դրանց մատղաշ ծիլերով («Կարօտ»):

Տուն, ծառ, ծաղիկ, հաց, ընտանիք, գաւակներ. սրանք ցանկացած հայի փայփայած երազանքներն են, աւելին՝ նրա ապրելու, գոյատեւելու կերպը: Հայրենիքից հեռու էլ հայը ստեղծում է ապրելու իր գրաւականները, իր եւ ընտանիքի համար ապահովում Հայրենիքի գոյութիւնը: Արամ Հայկազն այսպէս է ծառայել Հայրենիքին: Նրա ծառայութիւնն սկսուել է վաղուց՝ 1915-ի յունիսից, երբ հայրենակիցների հետ մաքառում էր օսմանեան կանոնաւոր զօրացանակի դէմ:

Արամ Հայկազի օրինակով մեր աչքի առջեւ յանունն է եղեռն վերապրած հայի բոլորովին այլ որակ՝ մարտնչող, կուռուղ, մինչեւ վերջ չզիջող որակ, հայի առնական տեսակ: Ահա՛ «Մեր մնացորդացը» պատմուածքը: Ամերիկայում հաստատուած մարդը իր քրոջից նամակ է ստանում, արհաւիրքի օրերից յետոյ քոյրը դարձել է թուրքի կին եւ գաւակներ է ծնել: Եղբայրն առաջարկում է հրաժարուել գաւակներից ու գալ Ամերիկա: Սակայն հայուհին չի կարող իր գա-

ւակներին ձգել եւ հեռանալ. մայր է... Այս առիթով Արամ Հայկազը մէկ այլ դէպք է պատմում, թէ կարդացել է մի հայուհու մասին, որը խեղդել է քրոջից ծնուած իր նորածնին: Զաւակապաշտ Արամ Հայկազը սա չի հասկանում. ինչպէ՞ս թէ սպանել սեփական գաւակին... Ու նա համոզում է իրեն նամակ գրող հային, որ վերահաստատի կարող քրոջ հետ: Արամ Հայկազը ցաւով արձանագրում է. «...Հոն գտնուող տառապած այդ սրբուհիներուն փրկութեան համար կա՞մ բան մը չըրինք եւ կա՞մ չկրցինք ընել...»: Հայ տղամարդու հոգու ցաւ ու մղկտոց. չեն կարողացել պաշտպանել հայուհիներին: Եղեռնի օրերին ընդամէնը 15 տարեկան պատանին իր ողջ կեանքն ապրել է հասուն տղամարդուն վայել խոր ցաւով, որ չի կարողացել փրկել մօրն ու հայ կանանց, որոնց տառապանքն անվերջ է. «Քրիստոս անգամ միայն մէկ անգամ խաչուեցաւ: Հոս իր կեանքը ամենօրեայ խաչելութիւն մըն է» («Մեր մնացորդացը»): Ուրեմն՝ ծառայել Հայրենիքին, ծառայել ժողովրդին: Հեռաւոր Ամերիկայում օրու ա չարքաշ աշխատանքից յետոյ նա դարձեալ ծառայում էր Հայրենիքին՝ այս անգամ գրչով: Գրում էր հայրենի քաղաքի դոկտ. Մարգարիտ Սաչատրեան հերոսամարտի, քրդերի մէջ հարկադրաբար ապրելու, հաւատուրացութեան (մօր խնդրանքով), Պոլսի որբանոցի կեանքի, կենդրոնական վարժարանում ուսանելու եւ իր ուսուցիչների, ինչպէս նաեւ եղբօր հրակշրով Ամերիկա տեղափոխուելու, ընտանիքի, գաւակների ու թոռների, հարեւանների, նրանց ճակատագրերի մասին...

Նամակներից տեղեկանում ենք, թէ ինչ դժուարութեամբ է հրատարակել իր գրքերը: Բայց չի վարանել. քանի որ նրա նշանաբանը դեռ մանկութիւնից արեան հետ եկող համոզումն էր՝ ծառայել Հայրենիքին: Գրելով ողջ կեանքի ընթացքում առանց վարձ ստանալու ակնկալիքի աշխատակցում է հայկական տարբեր պարբերականներին:

Պարզուով է՝ Արամ Հայկազի նշանաբանով ապրող (փառք բեզ Աստուած) հայորդիներ այսօր էլ կան, ապրում են մեր կողքին, որոնք ընթերցողի սեղանին իրար յետեւից դնում են Արամ Հայկազի նամակաները, «Մոռացուած էջերը» (3 հատորով) եւ «Ապրող ծառ

Շարք էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900  
Los Angeles, CA 90048

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

805 East Broadway  
Glendale, CA 91205

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning

300 N. Lake Ave. Suite 500  
Pasadena, CA 91101

- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**Insurance coverage can help you financially!**  
**Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է**

Coverage & Protection should be on the top of your priority list.

# Ա. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՆԿԻԼԵԱՆ (ԿԱՅԾԻԿ, ՀԱՃԻ)



### ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ (ՇԱՐԱՆԱԿԵՅԻ)

Աքիայի բերդարգելակայանը այցելողներուն մէջ ամէնէն իւրօրինակ այցելութիւնը կու տայ Մարո Նազարբէկեան: Մարո Աթէնքէն ծովու ճամբով կը հասնի Պէյրութ. անոր կ'ընկերանայ Աղասի (Կարապետ Թուրսարգիսեան), որ Պէյրութէն յետոյ ճամբան կը շարունակէ դէպի Կիլիկիա: Մարո կը մեկնի Հայֆա: Մարոյի նպատակն էր այցելել Աքիայի բանտարկուած ընկերներուն, յատկապէս Յ. Ճանկիլեանին, եւ եթէ հնարաւոր ըլլայ կազմակերպել անոր փախուստը: Երկու գաղափարակիրները անձնապէս ծանօթ չէին իրարու: Մարո բերդարգելարան կ'այցելէ ուսական հիւպատոսին եւ փոխ-հիւպատոսին ընկերակցութեամբ: Վերջինս կը ինդրէ Յ. Ճանկիլեանէն իրեն ընկերակցող օրիորդը պատցնել բանտին տարբեր մասերը: Շարունակելով պատմել դիպուածը, Յ. Ճանկիլեան կը գրէ. «Վերջապէս բոլորտիքը նայեցաւ որ բանտարկեալները մեզմէ բաւական հեռու կեցած էին, կամացուկ մը ըսաւ. »

-Հոս ճանկիլեան մը կայ, ո՞ւր է:

-Ես ինքս եմ ճանկիլեանը - պատասխանեցի իսկոյն:

Օրիորդը սարսուռ մը զգաց եւ ըսաւ.

-Ո՛հ, միթէ դո՛ւք էք ճանկիլեանը:

-Այո, ես ինքս եմ:

-Նշանաւոր եւ ցիւանա դատապարտուող ճանկիլեանը դո՛ւք էք:

-Այո՝ օրիորդ, եւ արդէն ուրիշ ճանկիլեան չկայ հոս:

(Վարանոտ եւ կասկածոտ).

-Մենք լսած էինք, որ դուք բաղդատմամբ հոս գտնուող բանտարկեալներուն, աւելի հանգիստ կ'ապրիք եւ խանութ ունիք եղեր:

Թէեւ ձեր լուսանկարն տեսած ենք ու կը նմանիք քիչ մը, բայց դուք չէք: Եթէ դուք եղած ըլլայիք, ի՞նչ է այս շղթան, այս ի՞նչ վիճակ է, գերեզմանին մօտեցած էք, չէ՞ որ հոս գտնուածներէն աւելի դժբախտ էք,- ըսաւ:

Համբերութիւնս չկարենալով զսպել, հարցուցի իրեն.

-Ներեցէք, օրիորդ, որո՞ւ հետ տեսնուելու պատիւն ունիմ, ո՞ւր տեսնուած ենք նախապէս, անշուշտ կը ներէք, որ չեմ յիշեր: Գրեմք ճանկիլեանն եմ ես. շատ հանգիստ էի եւ շղթաս շատ փոքր էր, խանութս հիմա պիտի տեսնէք, բայց այս վերջին օրերս դէպք մը տեղի ունեցաւ եւ այդ պատճառաւ շղթաս մեծցուցին, չարչարուեցայ եւ այս վիճակին ենթարկուեցայ: Ապա աւելցուցի.

-Կը փափաքէի գիտնալ, որ արդեօք պատիւ պիտի ընէ՞ք պարգելու մեր ծանօթ ըլլալու պարագան, որ ես չեմ յիշեր:

-Առաջին անգամն է, որ մենք կը տեսնուինք,- պատասխանեց ան,- բայց ամէն ինչ գիտենք ձեր մասին: Եւ չէ՞ որ միշտ կը գրէիք մեզի ձեր վիճակին մասին:

-Բայց ներեցէք, դուք ուրկէ՞ կու գաք եւ կրնա՞մ ձեր անունը գիտնալ:

-Ես Մարոն եմ եւ արդէն ձեզի գրած էի. նամակս չստացա՞ք:

Արդէն խանութիս առջեւ հասած էինք, երբ Մարո բառը լսեցի, կարծես երկրաշարժ մը տեղի ունեցաւ եւ կեցած տեղս զգալի կերպով երերացի: Յոգնութիւն պատրուակելով ծանր շղթաս գետին ձգեցի եւ շփոթեցայ, չգիտէի թէ ինչ պատասխանէի:

-Ի՞նչ կ'ըլլաք ընկեր ճանկիլեան, պաղարիւն եղէք,- ըսաւ Մարոն:

-Ի սէր Աստուծոյ, շուտով հեռացէք այս քաղաքէն, եթէ ոչ կը մատնուիք ու կը ձերբակալուիք եւ կը չարչարուիք: Կը պաղատիմ, հեռացէք, այլեւս բաւական է որչափ տեսնուեցանք. «Չունան» ( «Հնչակ» թերթին կեդոնականը - Ե.Ճ.) բռնուեցաւ եւ ատոր համար վիճակս այսքան ծանրացաւ, եթէ շուտով չհեռանաք՝ պիտի ձերբակալուիք, եւ երբ ձերբակալուիլնիդ լսեմ՝ վիճակս աւելի զէշ պիտի ըլլայ: Մարո, գոնէ ինձի մեղքերը եւ շուտով հեռացի:

Մարոն դողալ սկսաւ: (11)

Մարո սակայն կը յամենայ վերջնականապէս վերադառնալ. ան կը կաշառէ բանտի տնօրէնն ու պահակները եւ երկու անգամ եւս կը տեսակցի Յ. Ճանկիլեանի հետ: Ան որոշ գումար մը կը ձգէ Յ. Ճանկիլեանի մօտ, որպէսզի այդ գործածուի անոր կամ ուրիշ ընկերոջ փախուստի նպատակին: Մարոյի մեկնումէն վերջ է, որ բանտին պատասխանատուները կ'իմանան թէ ինչպիսի թանկարժէք «որս» մը բաց ձգած էին...:

1896 Դեկտեմբերին, ընդհանուր ներումով մը Յ. Ճանկիլեան ազատ կ'արձակուի: Կը մեկնի Պէյրութ, ապա Լաւնաքա եւ Աղեքասանդրիա:

Բանտէն դուրս գալէն ետք, Յ. Ճանկիլեան անմիջապէս կը մասնակցի ազգային-հասարակական կեանքին: Ան իր գործունէութեան առջեւ կը դնէ երկու հիմնանպատակ: Առաջին՝ աշխատիլ ամէն գնով յաջողցնել իր գիտակցիւն՝ Մեծն Մուրատի փախուստը Արեւմտեան Թրիփոլի (Լիպիա) աքտրապոլիտի, եւ երկրորդ՝ միասնականութիւն կամ համագործակցութիւն յառաջ բերել հայ լեզուագիտական կուսակցութիւններուն միջեւ:

Իր առաջին նպատակին համար Յ. Ճանկիլեան կը գրէ. «Կար նաեւ ուրիշ կարեւոր եւ կենսական խնդիր մ'ալ եւ պէտք էր զգայի ընկերակցական պարտականութիւնս կատարել: Նազըմը (Թուրքիոյ գաղտնի ոստիկանութեան տնօրէնը - Ե.Ճ.) ժամանակին թոյլ տուած չէր ոչ ընդհանուր ներումին եւ ոչ ալ մեզի հետ ներման արժանանար սիրելի ընկերա՝ Մուրատը, որ դեռ կը հեծէր Տրիփոլիսի բանտին մէջ, պէտք էր զինք ազատել (փախցնել) բանտէն: Գործը ինքնին վտանգալից էր, բայց ես յօժար էի այդ վտանգն յանձն առնել, ափրիկեան Տրիպոլիս երթալ ու զինք փախցնել, քանի որ արաք պաշտօնէաներու նկարագիրը լաւ ուսումնասիրած եւ անոնց հոգեբանութեան տեղեակ էի: Ուրեմն պէտք էր Մուրատին հասցնէ ձեռք բերել, իրեն հետ թղթակցիլ եւ պէտք եղած տեղեկութիւնը առնել վերջ գործի սկսիլ: Մուրատի քոյրը՝ Օր. Հայկանուշ Աղեքսանդրիա էր, իրեն

դմեցի՝ Մուրատի հասցէն առի եւ իսկոյն սկսայ թղթակցիլ» (12):

Ըստ երեւոյթին, իր այս առաքելութեան մէջ Յ. Ճանկիլեան կ'ըլլայ հետեւողական: Այս մասին կը վկայեն Մուրատի փախուստը կազմակերպելու կապակցութեամբ Հնչակեան կեդրոնական վարչութեան յղած նամակը Նշան Տումանեանին, ուր կ'ըսուի. «Ինչ վերաբերում է Պ. Ջհանգիլեանի (ճանկիլեանի արեւելահայ ձեռը - Ե.Ճ.) գրածներին, ձեռք բերուած տեղեկութիւնները բաւականաչափ լոյս սփռեցին նրանց վերայ, այնուամենայնիւ մենք էլի՝ միջոցներ ձեռք կ'առնենք կատարելապէս պարզելու եւ այդ խնդիրը» (13), ինչպէս նաեւ կեդրոնական վարչութեան Մուրատին յղած նամակը, ուր կ'ըսուի. «Խնդրում ենք, թանկագին բարեկամ, բարի եղէք ձեր նամակով պատասխանելու մեր մի քանի հարցումներին:

...2- Արդեօք դուք ձեր հին բարեկամներից մէկին՝ Պ. Ջհանգիլեանին նամակ գրած էք, եւ եթէ այո, ի՞նչ է քեր ձեր հիւանդութեան եւ նրանից բժշկուելու միջոցների մասին (ծածկագիր է. պէտք է հասկնալ ձեր բանտարկութեան եւ փախուստի միջոցներուն մասին Ե.Ճ.): Արդեօք գանգատ չայտնա՞ծ էք մի քանի բժիշկների գործ դրած բժշկական մեթոտների մասին (ծածկագիր. պէտք է հասկնալ արդեօք կասկած ունի՞ք փախուստի կարգ մը ձեւերուն եւ զանոնք գործադրողներուն հանդէպ Ե.Ճ.): Արդեօք հաւատք չէ՞ք ունեցած որ այդ մեթոտները գործադրուած լինեն ուղղամտութեամբ, ձեր առողջութեան (ծածկագիր. իմա՝ ձեր փախուստին - Ե.Ճ.) համար եւ ոչ թէ ձեզ աւելի վնասելու եւ փճացնելու համար: Այդ բանի մէջ ո՞րն է ձեր արտուածութիւնը ձեր կարծիքով, մենք շատ կ'ուզենայինք գիտնալ այդ» (14) : Յամենայն դէպս, Մեծն Մուրատի փախուստը կ'իրականանայ միայն 1906-ին եւ այդ մասին «Հնչակ» պաշտօնապէս կը ծանուցանէ իր 1906 Մայիսի թիւով:

Ինչ կը վերաբերի Յ. Ճանկիլեանի երկրորդ առաջադրութեան, ապա յստակ կ'երեւի թէ առաջին օրէն իսկ այդ կը հանդիպի լուրջ խոչընդոտներու: Այս հարցով, տակաւին Լաւնաքայի մէջ, ան կը տեսակցի վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն Միհրան Սվալի հետ: Ապա, Աղեքսանդրիոյ մէջ կը տեսակցի վերակազմեալ Լեւոն Մկրտիչեանի եւ դաշնակցական Գաբրիել խաթաղի հետ ու կուսակցութիւններու միասնութեան մասին իր պատկերացումները գրաւոր կը ներկայացնէ Պողոս Նուպար Փաշային, որ կ'արժանանայ վերջինիս հաւանութեան: Այս նպատակով ան կ'երթեւեկէ Փարիզ, Լոնտոն, Ժընև, եւ հանդիպումներ կ'ունենայ



Ա. Արփիարեանի, Մ. Տամատեանի, Ա. Նազարբէկեանի եւ «Դրօշակ»-ի խմբագրութեան (Ռոստոմ, Վահագ, Արմէն Գարո) հետ: Իր այս նպատակադրման մէջ ան հանդէս կը բերէ կուսակցական մասնակի մտահոգութիւններէ հեռու, անկեղծ լեզուափոխականի մօտեցում: Ան կը նկատուի «Յեղափոխական կուսակցութեանց միութեան կամ ձեռքարկի գործակցութեան առաջին ռասվիրաներէն, նախկին հնչակեան ղեկավար» մը (15):

Շուրջ տարուան մը վրայ երկրորդ իր հանդիպումներուն եւ բանակցութիւններուն որպէս արդիւնք, Յ. Ճանկիլեան կու գայ այն եզրակացութեան, որ վերակազմեալները իրենց կեցուածքներուն եւ տեսակէտներուն մէջ անկեղծ ու թափանցիկ չէին: Ան այս մասին յօդուածներով կ'անդրադառնայ Աթէնքի «Միութիւն» թերթին մէջ: Վերակազմեալները կ'ալիկոծին եւ անոնց պաշտօնաթերթ «Մարտ»ը, որ Յ. Ճանկիլեանի բանտէն ազատ արձակման առիթով լորձնաշուրթն գովասանքներ ձօնած էր անոր, կը սկսի լպիրշ եւ անվայել տողերով վարկաբեկել զայն: Բանալիէճին մէջ կը ներգրաւուի վառնայի «Շարժում» թերթը, որուն մէջ Յ. Ճանկիլեանին նուիրած իր յօդուածը երուխան կ'եզրափակէ այսպէս. «Հիմա, երբ ծանր շունչ մը կը փչէ խորշակի պէս, սիրելի՛ ընկեր, կրանիդէ արձանիդ վրայ չի կրնար խամրել այն ծաղիկները, որ հօգիւրցումունքները եղան: Թող խաբուի միամիտները, դուն անոնցը չես. քու ընկերներդ, որոնց հետ կախաղանի սիւներուն տակէն անցար անխուով եւ մահուան փախուստը լսեցիք, եւ անոնք որ ձեզի կը հետեւէին մօտիկէն, անոնք են որ կը գնահատեն ձեզ: Անոնք են որ անունդ լսածնուն պէս դող կ'ելլեն ինչպէս բռնկած սիրտ մը՝ իր սիրեկանի յանկարծական տեսքէն» (16) :

1898-ի ամրան, ծովու ճամբով կը մեկնի Օտեսա: Նաւուն մէջ իրեն կ'ընկերանայ բոլորովին այլ նպատակներով Օտեսա մեկնող Միս

### ՀՈԳԵՅԱԼԳԻՍ, ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԴՈԿՏ.-ՓՐՈՖԵՍՈՐ ՄԵՍՐՈՊ ԲԱԼԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

#### ՄԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Այո՛, 16 դար առաջ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը աստուածային շնորհով երկնեց հայոց տառերը եւ իր հանճարեղ մտքի զարթօնքով լուսազարդեց ճրդ դարը հայոց պատմութեան:

Լեզուն մեր ինքնութեան աղն ու հոլթեան խորհուրդն է մեծ: Այն դարձել է լոյսի եւ յոյսի կանթեղ, դարձել է դրօշ եւ մեզ բեր դարեր հայ է պահել: Այն առաջին կանչն

է եղել դիւցազնական մեր Հայկ նախահօր, եղել է հայ պանդուխտի վէրքի ու վշտի արտայայտիչը, հայ մանկան առաջին թոթովանքի ու օրօրոցային երկը: Դրա համար էլ մեր լեզուն ձկուն է եւ առնական ու պայծառ է, ինչպէս մշտաբոբոբ փարոս:

Յուզուած էին ներկաները, ծնողները, մանկավարժները, քանի որ 6-12 տարեկան մանուկներ իրենց իսկ շուրթերով հպարտանում էին մեր արքայական խօսքով, որը Չարենցի արեւահամ եւ հեզաճկուն լեզուն է, Պ. Սեւակի «Եղիցի լոյս», «Անլուելի Զանգակատուն» լեզուն, Սիւսանյանի մարտական եւ դիւզազնական լեզուն է, Մեծարենցի եւ Տէրեանի տաղերով քնարական եւ քնքուշ լեզուն:

Աւարտուեց երեկոն, բայց այն դեռ երկար ժամանակ կ'ապրի ներկաների սրտերում, իսկ մանուկների, պարման-պատանիների երակներում անվերջ կը մոնչայ արեան կանչը եւ կը չիշեցնէ նրանց մեր նախնաց մասին, նրանց մասին, որոնք մեծ ժառանգութիւն են թողել իրենց, նուաճուած բարձրութիւն, որին պէտք է ընդառաջ գնալ:

Ողջ երեկոյի ընթացքում մեզ հետ էր Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ Աստուածարնտրեալ հանճարը, որ իր ստեղծածի նման անասան ու բարի հայեացքով շոյում էր լարքականներին, նրանց, որոնք մէկ անգամ եւս հաստատեցին, որ քանի հայոց լեզուն կայ, հայը կ'ապրի եւ կ'ապացուցի աշխարհին, որ ոչ մի Մարայ Մելիքի ու մի երիտթուրքի, ոչ մի Բէլի շի յաջողուի կործանել մեզ, քանի մենք գիտենք սրի դէմ գրչով պայքարել, դժուարութիւնների դէմ յամառութեամբ:

ՀԱՆ ԿՐ ՊԱՇՏՊԱՆԷ ՏԵՆԻՍ ՁԱՅՆԻ ԵՒ ՄԻՉ Օ՛ՖԵՐՐԸԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

ուած են Հայ Ամերիկեան Խորհուրդին կողմէ: Որպէս Քաղաքի Ստուգիչ եւս, ես պիտի շարունակեմ իմ նուիրումս, որպէսզի ամբողջ Քաղաքէն ներս Հայ համայնքը արժանանայ յարգանքի»:

ՀԱՆ իր գորակցութիւնը յայտնեց նաեւ 13-րդ ընտրաշրջանէն Քաղաքապետական Խորհուրդի անդամութեան թեկնածու Միչ Օ՛ֆէրըլին:

Այն առթիւ ՀԱՆ յայտարարեց, «Օ՛ֆէրըլը երկար տարիներ նուիրեալ հանրային ծառայող է ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէ մեծ թիւով հայ բնակիչներ:

Անոր նուիրումը համայնքի բոլոր բնակիչներու կեանքը բարելաւելու ուղղութեամբ, կու գայ զատորոշելու գինք մնացեալ թեկնածուներէն: Ան միշտ հասանելի եղած է Հայ համայնքին, որու օրինակներէն մին այն է որ, ան միակ թեկնածուն է որ հայերէն լեզուով կայքէջ հաստատած է իր ընտրողներուն համար»:

«ՀԱՆ-ի գորակցութիւնը ունենալը մեծ պատիւ է ինձի համար: Ես մեծ յարգանք ունիմ այդ կազմակերպութեան եւ այն ծառայութիւններուն համար, որ ան կը տրամադրէ Լոս Անճելըսի հայութեան», - այս առթիւ յայտարարեց թեկնածու Միչ Օ՛ֆէրըլը:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ



Տարի մը եւս աւելցաւ Հայ Աւետարանական Մերտինեան վարժարանի տարիքին վրայ: 31 տարիներ առաջ ծնունդ առած էր ան, որպէս քանի մը «հաւատաւոր հայերու» իրականացուցած տեսլական՝ 13 աշակերտներով: 31 տարիներ ետք անկա դարձած է ամրակուռ հիմքու վրայ կանգնած առողջ հաստատութիւն մը, աշակերտութեան եւ պաշտօնէութեան թիւը բազմապատկուած, փայլուն դիրքերու հասած շրջանաւարտներու փաղանգ մը շրջապատուած՝ գայն հոգացող բազմահարիւր անհատներով: Անոր նիւթական բարեօք վիճակը կ'ապահովէ անսակարկ նուիրումով ծառայող Հոգաբարձական կազմը, ծնողաուսուցչական կազ-

արհեստավարժ արուեստագէտներ չէին, սակայն նոյնքան եւ գուցէ աւելի հաճոյք պատճառեցին ներկաներուն:

Երեկոյի բացումը կատարեց կազմակերպիչ յանձնախումբի գոյգ ատենապետուհիներէն մին՝ Ռիթա Մենչեանը: Ան բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց ներկաները, ապա ներկայացուց օրուան հանդիսավարները՝ 2000ի շրջանաւարտներէն իրաւաբան Վարդ Տէֆթերտէրեանը եւ 2003ի շրջանաւարտ Ատրինէ Գասապեանը, որ շուտով պիտի ստանայ ճարտարապետի իր տիտղոսը:

Ամերիկեան եւ հայկական ազգային քայլերգներու ունկնդրու-



մակերպութիւնը եւ Տիկնանց Օժանդակ Մարմինը, իրենց շարք մը տարեկան ձեռնարկներով: Այս տարուան Ապրիլ 7ին տեղի ունեցաւ հոգաբարձութեան տարեկան ճակերոյթը, Պրըպնէքի Սրբոց Ղեռնդեանց տաճարի կողքին գտնուող «Գալայճեան» սրահին մէջ, երեկոյեան ժամը 5:30էն սկսեալ, ներկայութեամբ աւելի քան 250 հիւրերու, բարեկամներու եւ ծնողներու:

Կազմակերպիչ յանձնախումբը ճիգ չէր խնայած հասութեաբ այս ձեռնարկը դարձնելու հաճելի երեկոյ մը, ուր բոլորին մօտ ակնյայտ էր «Մերտինեան» մեծ ընտանիքին պատկանելու հպարտութիւնը կամ ազնիւ նպատակի մը իրականացման ի խնդիր գոհողութիւն կատարողի ներքին գոհունակութիւնը:

Այս տարուան ձեռնարկը կը տարբերէր նախորդներէն: Արդարեւ, յայտադիրին մէջ բաժին վերցնողները ոչ թէ մեծանուն պատգամախօսներ կամ հանդիսավարներ ու արուեստագէտներ էին, այլ՝ վարժարանի շրջանաւարտներն ու ներկայ աշակերտները: Թէեւ անոնք

թենէն ետք, վեր. Վաչէ Էքմէքեան կատարեց բացման աղօթքը, ապա խօսք առաւ վարժարանի խանդավառ ու սիրուած տնօրէնուհի Լիլնա Արսլանեանը: Ան նախ տուաւ հակիրճ տեղեկութիւններ վարժարանի վերջին յաջողութիւններուն մասին, սրտագին շնորհաւորութեան եւ երախտագիտութեան խօսք ուղղեց ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, հոգաբարձութեան եւ այլ պատկան մարմիններուն, ծնողաց, վարժարանի ուսուցչականներու եւ պաշտօնէութեան, ինչպէս նաեւ՝ «Մերտինեան»ի առաքելութեան հաւատացող, անոր նիւթապէս ու բարոյապէս թիկունք կանգնող իւրաքանչիւր անհատի՝ ընդհանրապէս, եւ հին ու նոր մեծ բարերարներուն մասնաւորաբար:

Հուսկ, ան իր ջերմագին շնորհակալութիւններն ու շնորհաւորութիւնները յայտնեց վարժարանի հայերէնի ուսուցիչ եւ անձնակազմի հոգաբարձու Աշխէն Իսթեմեանի, «Մերտինեան»ին ընծայած անոր

# ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ԿԱՐԺԱՐԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒ ՈՏՆԱՐԵՏՔԵՐՈՎ



## ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Ապրիլ 24, հայ ժողովուրդի պատմութեան մէջ աննախընթաց թուական...

Ապրիլ 24, թուրքը ծրագրեց բնաջնջել հայ ժողովուրդը եւ ձգել մէկ հայ որպէս նմուշ:

Ապրիլ 24, թուրքը գործադրեց իր ծրագիրը... թուրքը ձախողած է իր նպատակին մէջ....

Բայց Արեւմտահայաստանը թափուր է:

Ապրիլ 24, 2013 մօտաւորապէս մէկ դար ետք աշխարհով մէկ հայութիւնը իր յարգանքի տուրքը տուաւ մէկուկէս միլիոն նահատակներուն՝ ոգեկոչելով անոնց յիշակատր ամէնուր:

Հայ վարժարաններն ալ լծուեցան հայոց ցեղասպանութիւնը ոգեկոչող ծրագիրներու իրագործման:



Հայ Քոյրերու վարժարանի աշակերտները փորձեցին դար մը պատմութիւնը հայրենագուրկ ժողովուրդին ներկայացնել արուեստի ճամբով:

Ինչպէս ամէն տարի այս տարի եւս Հայ Քոյրերու վարժարանը իր առօրեայ ծրագիրներու կողքին մշակեց մեծ եղեռնի 98 ամեակը ոգեկոչելու յատուկ ծրագիր:

Այս տարուան ծրագիրն էր «Նախահայրերու Ոտնահետքերով»՝ վերակոչել հայ ժողովուրդի դար մը պատմութիւնը, սկսելով Ապրիլ 24ի տխուր իրականութենէն հասնելով մինչեւ մեր օրերը, նպատակն էր՝ աշակերտներուն տալ պատկերացումը մեր նախահայրերու ապրած գողգոթային եւ նուաճումներուն:

Այսպիսով Հայ Քոյրերու վարժարանէն ներս, Ապրիլեան նահատակներու յիշատակը վերականգնող գործունէութիւններու շարքին առաջինը հանդիսացաւ Ապրիլ 22-

ին ութերորդ դասարանի աշակերտներու այցը Մոնթեպելլոյի եղեռնին նուիրուած յուշարձանին, ընկերակցութեամբ իրենց ուսուցիչներուն, անոնք իրենց սորված արտասանութիւններով, երգերով, շարականներով կենդանացուցին վայրը ապա հողորդութեան նահատակներու հոգիներու հետ՝ մոմ վառելով եւ խունկ ծխելով եւ վարժարանի կողմէ ծաղիկաբազմը զետեղելով վերադարձան դպրոց:

Ապրիլ 24-ի նախորդող օրերը, բոլոր աշակերտները, դպրոց բերին իրենց հինգած կօշիկները: Ապրիլ 23-ի առաւօտուն այդ հին կօշիկները շարելով դպրոցի շրջափակին մէջ պատկերացումը տրուեցաւ պատմական Հայաստանի քարտէսին, իսկ քաղաքները նշանակուեցան ութերորդ դասարանի պատրաստած պատուանդներով, որոնց վրայ նշուած էր քաղաքներու անունները:

ները եւ տեղուց հայութեան թիւը 1915-էն առաջ եւ վերջ, նաեւ զետեղուած էին եօթերորդներու կողմէ պատրաստուած նահատակ գրագէտներու «զերգմանաքարերը» իրենց ծննդավայրերու ցուցատախտակներու մօտ, կօշիկները պիտի ուղղէին աշակերտութիւնը բոլոր շրջաններէն դէպի Տէր Զօր ուր հաւաքուեցաւ հայ ժողովուրդի մնացորդացը, եւ ուրկէ յարուցիւն առաւ՝ տարածուելով աշխարհով մէկ: Ապրիլ 23-ի առաւօտուն յուզիչ էր դպրոցի շրջափակը, ան վերածուած էր անմարդաբնակ լքուած Արեւմտահայաստանին, ուր մնացած էին այդտեղէն աքսորուած եւ ամիսներով անապատները քաղող ու դէպի Տէր Զօր ուղղուած մեր նախահայրերու մաշած կօշիկները....հիմա հոն միայն խունկի ծուխն էր որ կը տիրապետէր...եւ վստահ մեր անշիւրիմ նահատակներու հոգիները խայտանքով կը թեւածէին ի տես նոր սերունդի գիտակցու-

# «ՅՈՎՍԷՓԵԱՆ» ԿԱՐԺԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՋԻՆ



Ապրիլ ամսուան ընթացքին հայոց պատմութեան եւ մշակոյթի թեմաներուն շուրջ տեղի ունեցած հայկական վարժարաններու 8րդ կարգի աշակերտութեան զարգացման մրցումը կրկնակի իմաստ կ'ունենայ, որովհետեւ 13-14 տարեկան պատանի-պարմանուհիներ երկար ժամեր տրամադրելով՝ իրենց առօրեայ դասերուն կողքին նման ծանր յանձնարարութիւն մը կը ստանձնեն: Անոնք սորվելով հայոց ազգի ծագումէն մինչեւ նորօրեայ թուականները տեղի ունեցած պատմական կարեւոր իրադարձութիւնները՝ ապահոված կ'ըլլան անոնց անմահութիւնը եւ փոխանցումը մեր յաջորդ սերունդին, այդ ալ՝ մեր Յեղասպանութեան ոգեկոչման ամսուան ընթացքին: Սոյն ձեռնարկը մասնակցող բոլոր աշակերտներուն մօտ մեր ազգի պատմութեան եւ աւանդին հանդէպ սէր ու յարգանք կ'արթնցնէ, եւ յոյսով ենք, որ անոնցմէ ոմանց մօտ այն աստիճան հետաքրքրութիւն ստեղծէ, որ մղէ զիրենք մասնագիտանալու պատմագիտական նիւթերու մէջ:

Հարաւային Քալիֆօրնիոյ մէջ գործող ութ հայկական վարժարաններէն 32 աշակերտներ ներկայացան «Արարատ տուն», Միշըն Հիլզ, Ապրիլ 14ին, մասնակցելու համար սոյն հաստատութեան կազմակերպած Հայոց պատմութեան զարգացման մրցումին:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցուց Ա. եւ Մ. Յովսէփեան

վարժարանի աւարտական ութերորդ կարգէն մասնակցեցան հետեւեալ 4 աշակերտները՝ Սարին Բամբալեան, Գարոլին Մարտուրեան, Մեղեղի Մանոյեան եւ Ալէք Կիւմրիչեան, ու անոնք հանդիսացան առաջին՝ ապահովելով առաւելագոյն 99 կէտէն 97ն: Այս աշակերտներուն մղիչ ուժն ու մարգիչը ուսուցչուհի Լիզա Մանոյեանն էր, որուն ջանքերն ու տրամադրած աշխատանքը պատկուցեցան յաջողութեամբ:

Տեղին է նշել, որ վերջին չորս տարիներուն ընթացքին «Յովսէփեան» աշակերտները երրորդ անգամն ըլլալով կը հանդիսանան առաջին:

Երախտապարտ ենք «Արարատ տուն», Արշակունի ամուլին եւ Մեկի Մանկասարեան-Կոստիւնին, որոնք յաջորդական 14րդ տարին ըլլալով՝ իրականացուցին այս մրցանքը, որ կը միտի աշակերտներուն մօտ մրցակցութեան ոգին արթնցնելու կողքին՝ հայ գրականութեան եւ պատմութեան մասին կարեւոր գիտելիքներ փոխանցելու:

Այս մրցանքին առաջին հանդիսանալով՝ աշակերտները վարժարանին ապահովեցին նաեւ հազար տոլարի նիւթական մրցանակ մը, իսկ իւրաքանչիւր աշակերտ ստացաւ Մեծն Տիգրանի օրերուն գործածուած մետաղադրամէն կրկնօրինակներ:

Քղթակցութիւնը՝ վարժարանէն

թեան ու վերաբերումին:

23 Ապրիլի առաւօտ կանուխ տեղի ունեցաւ աշակերտական սուրբ Պատարագ մասնակցութեամբ բոլոր դասարաններու աշակերտութեան, պատարագիչն էր Կլենտէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուց ժողովրդապետ Հայր Գրիգոր Շահինեան: Սուրբ Պատարագէն ետք աշակերտները, Հայր Գրիգոր Շահինեանի եւ երկու բուրվառակիր աշակերտներու կողմէ առաջնորդութեան դէպի Արեւմտահայաստան, հետեւելու մեր նախահայրերու ոտնահետքերուն, մինչ ուսուցչուհի՝ Լինտա Գանտիլեան մանրամասն նկարագրականը կուտար եղեռնի եւ մէկ դար առաջ տեղի ունեցած քստմնելի իրականութեան: Խումբը դանդաղ կը յառաջանար կանգ առնելով իւրաքանչիւր քաղաքի մօտ աղօթք առաքելու եւ խունկ ծխելու.....ու փոքրերը, նոյնիսկ 6 տարեկանները քալեցին.... քալեցին ճիշդ այնպէս՝ ինչպէս իրենց նախահայրերն էին քալեր, իրենց ետին թողելով շէն գիւղերն ու տունները....հասնելու Տէր Զօրի

անապատները, եւ արշաւը վերջ գտաւ «Տէր Զօր» ուր զետեղուած էին վարդեր, խորհրդանշելով հայ ժողովուրդի վերընծիւղումը. իւրաքանչիւր աշակերտ ակնածանքով վերցուց այդ վարդերէն եւ տարաւ վարժարանի խաղաղայրը զետեղուած ծիծեռնակաբերդի մանրակերտին մատուցանելու: Աշակերտները «Ծիծեռնակաբերդի» շուրջ հաւաքուելէ ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն եւ վերջ գտաւ արարողութիւնը «Հանգչեցէք դուք անդորր»՝ նահատակներու նուիրուած շարականի երգեցողութեամբ: Միջոցին երկրորդ դասարանի աշակերտները իրենց պատրաստած բողբոջ ցուցատախտակներով կ'արտայայտէին իրենց պահանջատիրութիւնը: Կէսօրէ ետք տեղի ունեցաւ հանդիսաւոր ոգեկոչում, Օրուան հանդիսավարն էր Տիկ. Լինտա Գանտիլեան, որ լրիւ հանդիսութեան շրջանին հայոց պատմութեան վերջին հարիւրամեակի մա-

### ԴՈԿՏ. ԱՐՏԱ ԳԵՊԵՏՅԱՆԸ ԱՄՍԱՆ - ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

#### ՄԱՐԱԼ ՆԵՐՍԷՍՅԱՆ

Դոկտ. Արտա ձեպէճեանը իր առաջին բանախօսական ելոյթովը, չորեքշաբթի, 12 Ապրիլ 2013-ին ԱՄՄ-ի մեծ սրահին մէջ կարողացաւ սիրելի Յորդանանի շատ եւ շատ մտաւորական տարրին, եւ անշուշտ սիրուելի իր մատուցած մեծապէս շահեկան նիւթով, որն էր "Հայերէն լեզուի պահպանման մարտահրաւէրները ցեղասպանութեան 100-ամեակի սեմին", ողջ հայութեան մտահոգող հարցը:

Դոկտ. Արտան իր բանախօսութեամբ թողեց այն հեղինակաւոր տպաւորութիւնը, որ հայերէն լեզուն, իր Մեսրոպեան տառերով պիտի պահուի եւ պիտի հանդիսանայ մեր հայապահպանման, մեր ունեցած անկախ պետականութեան եւ մեր գերզարգացման առաջնորդն ու ուղղեցողը:

Նա քննարկեց շատ եւ շատ տարբերակներ, շատ եւ շատ միջոցներ եւ հետապնդման մեթոտներ, որ հայերէն լեզուի պահպան-



գաղութի հոգեւ առաջնորդ՝ Գեըշ. Տ. Վահան Արք. Թօփալեանը:

Երեկոյի բացման խօսքով հանդէս եկաւ ԱՄՄ-ի Մշակութային Յանձնախումբի կարկառուն անդամ Մարալ Վարդապետեանը: Մարալը ողջունեց ագն. բանախօսին իր ցոյց տուած անզնահատելի ազգանուէր ներդրումին համար,



նումը հանդիսանալ մեր ազգի գոյատեւման գրաւականը:

Փրոֆ. Արտայի բանախօսութիւնը կը կրէր, մանկավարժական եւ ինժեներական դասաւորութիւններն ու պահանջները բաւարարող բոլոր ձեւերը:

Արտայի նիւթը կը հանդիսանար հետաքրքիր, շահեկան, գրաւիչ եւ ներկաներուն շատ հրապուրիչ: Ներկաները հրապուրող եւ բոլոր միտքերը կլանելու եւ ըմբռնելու ցանկութիւնն ու տենչը անխզելիորէն կապ պահեցին հանդիսականներու եւ բանախօսին միջեւ:

Ագն. Բանախօսութեան բացառապէս անցեալին եւ ներկայիս լեզուապահպանման տարբերութիւնները, եւ սուաւ իր խորհուրդներն ու մեթոտները հայերէն լեզուի պահպանման մարտահրաւէրները մասին, մանաւորաբար ցեղասպանութեան 100 ամեակի սեմին:

Այս յոյժ կարեւոր ձեռնարկը կը նախագահէր յորդանանահայ

սուաւ հակիրճ կենսագրականը եւ բացառապէս Արտայի ունեցած եզակի յաջողութիւնները իր աշխատանքային ասպարէզներէն ներս:

Բանախօսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Ամմանի ՌԱԿ շրջ. վարչ. ատենապետ՝ Ներսէս Ներսէսեանը: Ան բնութագրեց սոյն բանախօսութիւնը որպէս "Ազգային զմայլանք" հանդիսացող մի նիւթ եւ բանախօս:

Ներսէսեանը շնորհակալութիւն յայտնեց Տէր եւ Տկն. ձեպէճեաններուն իրենց սուաձ այն խոստումին համար, որ շուտով, կրկին անգամ պիտի այցելեն Ամման - Յորդանան եւ աշխատանքային սեղաններով պիտի նպաստեն գաղութիս խրախուսիչ տարր հանդիսացող եւ շօշափելի թիւով հայերէն լեզուի ծարաւ զգացող երիտասարդ երիտասարդուհիներուն, որոնք իրենց հարցադրումներով բարձր տպաւորութիւն թողեցին սիրելի բանախօսին վրայ:

### ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԶԱՄԵՐԳ ԳԱԴԻՐԷԻ ՄԷՋ



Այս տարի ազգովին, հայրենիքէն ներս թէ դուրս, աշխարհի երաժշտական ու երաժշտասէր հասարակութեան հետ, երգահանդէսներով, նուագահանդէսներով, թատերապարային կամ այլ ձեռնարկներով արժանապատիւ հպարտութեամբ կը տօնախմբենք հանճարեղ երգահան Արամ Խաչատրեանին ծննդեան 110-ամեակը:

Արամ Խաչատրեան իր արուեստին մէջ հնչեցուց գեղարուեստական ի՛ր խօսքը, հիմնեց ի՛ր ստեղծագործական ոճը եւ հաստատեց ի՛ր երաժշտական լեզուն: Արամ Խաչատրեանին արուեստը իր հմայքին տակ առաւ թէ՛ հայր եւ թէ՛ օտարը, թէ՛ դրկիցը եւ թէ՛ միւս կիսագունտին մարդը, թէ՛ սրտակիցը եւ թէ՛ չկամը, քանի որ ան գտած էր դէպի մարդուն սիրտը տանող ամենակարճ եւ ամենավստահելի ուղին: Ան խօսեցաւ երաժշտութեան լեզուով եւ խօսեցաւ այնպէս, որ անդիմադրելիորէն հասկնալի էր բոլորին, քանի որ այդ լեզուն միաժամանակ թէ՛ ազգային էր եւ թէ՛ միջազգային, թէ՛ աւանդական եւ թէ՛ նորարարական, թէ՛ քնարական եւ թէ՛ հերոսական, թէ՛ մտերիմ եւ թէ՛ իշխանափառ: Ուստի ոչինչ կը մնար այլեւս աշխարհին քան խոստովանիլ խաչատրեանական արուեստին անկասելի յաղթանակը: Մեծ երաժշտը, խօսելով ամբողջ մարդկութեան հասկնալի լեզուով՝ երաժշտարուեստի լեզուով, ոչ միայն դարձաւ աշխարհի ամենայայտնի հայր, այլեւ մեր ազգային երաժշտութիւնը հասանելի, հասկնալի ու սիրելի դարձուց աշխարհին՝ իր երաժշտութեամբ հարստացնելով հայրենի եւ համաշխարհային երաժշտութեան գանձարանը:

Եզիպտահայ համայնքը ի մի բերելով կատարողական իր բոլոր ուժերը, տօնական բացառիկ համերգով մը եկաւ իր խոնարհումը բերել մեծ երաժշտի յիշատակին: Արդարեւ, Շաբաթ, 16 Մարտ 2013-ին Հելլոպոլսոյ «Պըլըքտանեան» հանդիսասրահին մէջ, հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գեըշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեանի, կազմակերպութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ նախաձեռնութեամբ «ԱՐԱՔՍ» երգչախումբի, տեղի ունեցաւ մեծ երգահան Արամ Խաչատրեանի ծննդեան 110-ամեակին նուիրուած յոբելեանական բացառիկ համերգ: Ելոյթ ունեցաւ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «ԱՐԱՔՍ» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար-երաժշտագէտ Միհրան Ղազէլեանի,

մասնակցութեամբ երաժշտագէտ-դաշնակահար Հայկ Աւագեանի, հարուածայիններ Ռուբէն եւ Վարդան Թերզիպաշեաններու, մեներգիչներ Գոհար Ղազէլեանի, Սիլվա Թէրզիպաշեանի, Արա Քէօհնէլեանի եւ Ռուբէն Սաատի, «Մարդարապատ» պարախումբի (պարուսոյց՝ Գարօլին Մազլումեան) եւ «Զանգեղուր» պարախումբի՝ (պարուսոյց՝ Սիւզան Յակոբեան-Գարգուր):

Գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, համերգին ներկայ էին Գահիրէի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Յակոբեան, Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան նորին գերագանցութիւն Դոկտ. Արմէն Մելքոնեան եւ դեսպանատան անձնակազմը, Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի Ատենապետ Տիրար Նուպար Սիմոնեան, Պատուարժան Քաղաքական Ժողովի ատենապետ Տիրար Օննիկ Պըլըքտանեան, Ազգային Իշխանութեան անդամներ եւ արուեստասէր հասարակութիւն մը:

Մեծարանքի այս համերգին համար պատրաստուած էր աննախադէպ ճոխ, բացմագան եւ կատարողական նորութիւններով լեցուն յայտագիր մը, որ կը պարունակէր խաչատրեանական 10 խմբերգ, 4 մեներգ, 1 եռերգ, 5 պար, հեղինակը ներկայացնող վաւերագրական կարճ շարժանկար մը, ինչպէս նաեւ բանախօսութիւն:

Տօնական հանդիսութիւնը սկսաւ Արփի Խաչերեանի բացման խօսքի ընթացքումով: Ապա տօնականօրէն յարգարուած բեմը (բեմայարդար Գարօլին Արսլանեան) տրամադրուեցաւ «ԱՐԱՔՍ» երգչախումբին, որն իր ելոյթը սկսաւ՝ կատարելով Խաչատրեանի Դիմակահանդէսի հանրայայտ վալսին խմբերգային փոխադրութիւնը: Ամբողջ երեկոյի ընթացքին դաշնակի վրայ կ'ընկերակցէր երաժշտագէտ-դաշնակահար Հայկ Աւագեան: Վալսին յաջորդեցին Գարուն-Երեւան եւ Երջանկութեան Գորգը երգերու խմբերգային փոխադրումները: Մեներգերով հանդէս եկան Արա Քէօհնէլեան Պէպոյի երգով եւ Սիլվա Թէրզիպաշեան Երգ Աղջկայ Մասին երգով: Այնուհետեւ երգչախումբը կատարեց Հայաստան խմբերգը եւ հուսկ Զօն Յնձութեան փառաբանական խոշորածաւալ ստեղծագործութիւնը՝ գրուած մեծօ սոփրանոյի, երգչախումբի, նուագախումբի, լարայիններու եւ սուալահարներու համոյթի համար,

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Բարբոզաբարձիք բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցուեր:  
Բերնաշարթի վթարի հետեւեալով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



### ԱՊՐԻԼ 24, 98-ՐԴ ԿԱՆՎԱՌԸ

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆ

#### ԱՐՏԱԻ ԱԶԳՄԵԼ ԳԻՍԵՅԹԵԱՆ

Հայոց դէմ գործուած ցեղասպանութիւնը խորհրդանշող Ապրիլ 24-ին ենք դարձեալ: Ազգովին կը խնկարկենք մեր նահատակներուն հոգիներուն համար եւ 98-րդ տարին ըլլալով կ'ուխտենք նուիրուելի մեր ազգին բարօրութեան ու հայրենիքին հօրացման ի խնդիր: 98 տարիներ ցեղասպանութենէն ետք: Ինչպիսի յորձանուտներու մէջ միտնուեցաւ մեր ժողովուրդը այս ժամանակամիջոցին եւ ինչպիսի բարձունքներ նուաճեց ան:

Ուր էր մեր հայրենիքը եւ ուր հասած է այսօր: Իսկապէս որ վերածնած ենք կրկին եւ մեր պատուական տեղը կը գրաւենք համամարդկային ընտանիքին մէջ: Այս բոլորը եղան շնորհիւ մեր դարաւոր պատմութենէն մեզի փոխանցուած պայքարելու ոգիին, գոյատեւելու հաստատակամութեան եւ ժողովուրդներու շարքին ապրող ու ստեղծագործող ազգ մը ըլլալու մեր վճռակամութեան:

Շնորհիւ այդ հոգեկան ու մտաւոր ժառանգին ու այդ ոգիին, կրկին ու կրկին անգամ ըլլալով հայրենիք կառուցեցինք եւ պետականութիւն հաստատեցինք: Շնորհիւ այդ դարաւոր ցեղասպանութեան զոհերու աւանդին, ամենադժուարին պայմաններուն մէջ իսկ սփիւռք յիշատակը չաւերժացնող խաչքար կերտեցինք իր դպրոցներով, եկեղեցիներով, ազգային կառուցներով, իր մարդով եւ յատկապէս իր հայ մարդով: Սփիւռք մը, որ պատիւ կը բերէ հայ ժողովուրդին, սփիւռք մը որ հօրութիւնը կ'աւելցնէ հայրենիքին ի վերջոյ սփիւռք մը որ սրբազան դատ կ'ենտապնդէ եւ որ իր իրաւունքները կը պահանջէ ցեղասպանէն:

Ահաւասիկ հայ ժողովուրդը իր նոր պատմութեան մէջ: 98 տարիներու ընթացքին գոյատեւեց ան հակառակ ցեղասպանութեան ենթարկուելուն ու վերկանգնեց ինքզինք անբացատրելի մարտունակութեամբ:

Այդ բոլորը լաւ այլեւ՝ շատ լաւ: Ինքնաբերաբար կը հետեւի բնական հարցադրումը ամբողջ դարաշրջանի վրայ երկարող մեր տիտանային ծառայումէն ու հերոսավայել մաքառումներէն ետք, ինչպիսի մարտահրաշխանքներու դէմ յանդիման կը գտնուինք մենք այսօր եւ ապագայի համար ինչ պէտք է ընենք:

Այլ ժողովուրդներու նման մենք ալ դժուարին ժամանակներու մէջ կ'ապրինք այսօր:

Կայսրութիւններ կ'ենթարկուին փլուզումի, կ'աւերուին երկիրներ, նոր մտածողութիւններ կ'ընդհանրանան եւ նոր բարքեր հող կը գրաւեն:

Նոր աշխարհ մըն է որ կը ծնանի դժուարին երկունքով: Այդ բոլորին մէջ դէմ յանդիման կը գտնենք զմեզ նոր իրավիճակներու:

Այս նոր օրերուն մէջ առաջին հերթին կայ անշուշտ իբրեւ մարդ գոյատեւելու պայքարը: Հայ ժողովուրդը վերապրեցաւ մոխիրներէն որ հետզհետէ կը բարդանայ համաշխարհային վերածնող առասպելական փիւնիկին նմանացումի այս հանգրուանին: Այս մէկը բնականաբար իր շուքը կը ձգէ իբրեւ Հայ մարդ ապրելու կարելիութեանց վրայ:

Միւս կողմէ մեծ յեղաշրջում

կը յառաջացնեն հաղորդակցութեան գերարդիական միջոցները, որոնց պատճառով փուլ կու գան ազգամիջեան պատնէշները ու կ'անհետանան սահմանները: Այս մէկը իր բազում առաւելութեանց կողքին նաեւ լայն դուռ կը բանայ օտար մտածողութեանց դիմաց, որոնք կարգ մը պարագաներու մէջ կը խաթարեն մեր ազգային ինքնուրոյն գաղափարները: Հաղորդակցութեան միջոցներու այս մեծ զարգացումի օրերուն, համաճարակի նման կը փոխանցուին օտար բարքերը որոնք յաճախ կը փոխեն մեր իւրապատու դիմագիծը:

Այս բոլորին զուգահեռ կը ծագին երկիրներու քաղաքական վերիվայրումները, որոնք երբեմն մնալու կամ գաղթելու երկընտրանքին առջեւ կը դնեն հայութիւնը, յատկապէս այն երկիրներուն մէջ ուր կայք հաստատած են անոնք: Վերջին ցայտուն օրինակները Հայկական յաւիտեանականութեան անիւր կու գան մերձաւոր արեւելեան երկիրներէն: Ինչ են որմնաքանդակ, Գանձասարի վանք այդ երկիրներուն մէջ բնակող ժողովուրդներուն համար նախատեսուած ծրագիրները մնալ թէ՛ գաղթել եւ ուր գաղթել...

Այս բոլորը եւ նմանօրինակ մարտահրաշխանքներ վեր են մեր տարտղնուած ուժերէն եւ հետեւաբար մեզ կը պարտաւորեցնեն որ իբրեւ հայկական հաւաքականութիւններ եւ ազգային կառուցներ համադրենք մեր աշխատանքները, քով քովի բերենք մեր ուժերը եւ միասնական ծրագրումով ջանանք դիմակալել զանոնք: Այլեւս արտօնելի չէ որ մասնատուած ըլլայ սփիւռքը այլեւս արտօնելի չէ որ ուժերու վատնում արձանագրեն սփիւռքահայ մեր կառուցները: Ամբողջական վերադասաւորումի կարիք ունի սփիւռքը իր կառուցներով եւ իր ազգային առաջնահերթութիւններով:

Հայ ժողովուրդի յաւերժականութեան խորհրդանիշ՝ Սրբազան լեռը Անդին բնականաբար կու գայ հայրենիքին դերը: Ծիշդ է թէ այնտեղ ալ կան դժուարութիւններ, այնտեղ ալ կ'արձանագրուին խոչընդոտներ, բայց ի վերջոյ պետականութիւն կայ այնտեղ որ կրնայ համեմատաբար աւելի հեշտ ձեւով շրջանցել այդ արգելքները եւ աւելի հեզասահ կերպով լուծումներ գտնել այդ

#### Շարունակուած էջ 14-էն

սին խօսեցաւ մեկնաբանելով աշակերտներու կողմէ եղած ասմունքներն ու խմբերգները: Օրուան խօսքը փոխանցեց վարժարանիս Տնօրէնուհի քոյր Լուսիա, ապա հերթով բեմ ներկայացան բոլոր աշակերտները եւ մեկնաբանեցին երգեր, արտասանեցին պատշաճ ոտանաւորներ եւ ներկայացուցին Ա. Ահարոնեանի «Վազրիկ» դրուագը, որոնք բծախնդրօրէն ընտրուած, համադրուած եւ պատրաստուած էին հայերէն դասականող ուսուցչուհիներու եւ երաժշտութեան ուսուցչուհի կողմէ: Այս տարուան յայտագիրը տարբեր էր նախորդներէն որովհետեւ ան իր երգերով եւ ոտանաւորներով կը խորհրդանշէր հայոց ցեղասպանութենէն ճողոպրած հայ մարդու ապրելու կամքն ու աշխատասիրութիւնը, ապա իրենց արտասանութիւններով եւ երգերով անցան ճակատամարտերէ եւ ազատագրական պայքարներէ հասան անկախութիւն եւ Հայաստանի հանրապետութիւն փառաբանելով հայոց բանակի ուժն ու քաջութիւնը: Հանդիսութիւնը վերջ գտաւ Տէրունական արօթքի երգեցողութեամբ:

Սակայն Ապրիլը կը շարունակուէր... Եւ Ապրիլ 30-ի յետմիջօրէին

միջնակարգի աշակերտները առիթ ունեցան ըմբոշինելու Արմէն Արոյեանի մեկնաբանութիւնն ու վկայութիւնները Արեւմտահայաստանի ու կիլիկիոյ տեսաբերիներու ընդմէջէն, աշակերտները անգամ մը եւս ակնատես եղան Թուրքին իրագործած անմարդկային ոճիրին:

Շնորհակալութիւն Պրն. Արմէն Արոյեանի բծախնդիր աշխատանքին, աշակերտներուն համար վերահաստատում մըն էր իրենց աշխատանքին, անոնք հետաքրքրութեամբ հետեւեցան իրենց սորված Արեւմտահայաստանի եւ հայկական կիլիկիոյ քաղաքներուն, բերդերուն, որոնք այս ներկայացումով մարմին աւին եւ շօշափելի դարձան, իսկ իրենց հոգիներուն ու մտքերուն մէջ արմատաւորուեցաւ պահանջատիրութեան գաղափարն ու տունդարձը... Ինչպէս որ ութերորդէն Շանթը կ'ըսէր՝ «Միայն լացող մանուկի պէս պիտի ուզե՞նք, պէտք է երթանք, վերադարձնենք մեր հողերը»:

Այս էր մեր նպատակը, այս է հայ դպրոցի նպատակը:

Ապրիլ ամիսը վերջ գտաւ, սակայն մենք կը շարունակենք մեր «Նախահայրերու ոտնահետքերով» քալել, հայ դպրոցին ներս ներշնչելով հայ պատանին՝ հայրենասիրութեամբ, պահանջատիրութեամբ եւ տուն դարձի տրամադրութեամբ:

դատին հետապնդումը, հասնելու համար մեր ժողովուրդին դէմ ի գործ դրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ մեր իրաւունքներուն վերատիրացման: Այս իրագործելու համար պարտինք մնալ Հայ մեր սրտով ու միտքով եւ հարկ է ամենայն վճռակամութեամբ դիմակալենք մեր ինքնուրոյն հույժեղ սպառնացող որեւէ վտանգ՝ ի վերջոյ հայութեան դէմ ցցուող որեւէ տագնապ անհրաժեշտ եւ հրամայական է որ դիմակալենք համահայկական միացեալ ձիգերով, համադրուած ուժակամութեամբ եւ անպայմանօրէն՝ հայրենիքին նեցուկով:

Մեծ Եղեռնի 98-րդ կանգառին ենք, պէտք է ծրագրաւորեալ ձեւով դիմաւորել յառաջիկայ կանգառները հասնելու համար ամբողջական մէկ հայրենիք եւ «ամբողջական մէկ ժողովուրդ» մեր նահատակներէն մեզի աւանդ մնացած մեր նահատակներու սրբազան պատգամին:

<b>ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ</b>	ST. GREGORY ARMENIAN CHURCH <b>Geragos</b> BANQUET HALL OF PASADENA	<b>NEWLY REMODELED</b>
<p><b>Now ready to host your</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Wedding</b></li> <li>• <b>Baptism</b></li> <li>• <b>Anniversaries</b></li> <li>• <b>All other happy &amp; sad events.</b></li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>• <b>հարսանիք</b></li> <li>• <b>Սկստութիւն</b></li> <li>• <b>Տարեդարձ</b></li> <li>• <b>և ամէն ուրախ ու տխուր առիթներ:</b></li> </ul> <p><b>ՎԱԹԷ 562-715-8730 ՎԱԿԷ</b></p> <p><b>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք</b></p>		

ԱՆԲԱՍԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Շարունակում է 5-էն

տագիտութեան, օրինակելի մարդ, դաստիարակ, օրինակելի ազգային կրթական մշակութային գործիչ, բիւր յարգանք իր յիշատակին»:

Հրաւիրուեց «Սահակեան սանուց» վարչութեան անդամ յարգելի պրն. Նազարէթ Գեւորեանը, որը տեսահոլովակով ներկայացրեց «Սահակեան»-ի հին խղճուկ շէնքը:



Խաչիկ Թաշնեան

բակը, ուր աշակերտները կը վագուզէին, կը խաղային Տնօրէնի աշակերտները ներկայութեամբ եւ հսկողութեամբ, ապա ցուցադրուեց՝ «Սահակեան Լեւոն Մկրտչեան» գոլէջի նորակառուց հոյակապ շէնքը:



Վարդուհի Գազանեան

այնուհետեւ Երեւանում Բենիամին Ժամկոչեանի յիշատակին նուիրուծ թիւ 119-րդ դպրոցը Տնօրէն Ժամկոչեանի կիսանդրին մուտքի մօտ: Նա բաւական լայն բացատրութիւն-

ներ տուեց իրենց կատարած աշխատանքների եւ դրամական յատկացումների մասին շէնքի նորոգութեան եւ այլ հարցերին առնչուող: Հանդէսի աւարտին «Գալի-



Արծ. Տ. Արշակ Ա. Քհն. Խաչատուրեան

Ֆորնիայի Սահակեան սանուց» վարչութեան անդամ՝ ազնուափայլ տիկ. Վարդուհի Գազանեանը ջերմ շնորհակալութիւն յայտնեց ներկաներին եւ բոլոր ելոյթ ունեցողներին ասելով՝ «...Շատ սիրելի սահակեանցիներ եւ «Սահակեան»-ի բարեկամներ, որ սիրալոյսով ներկայ գտնուեցաք մեր այսօրուան ձեռնարկին, անգամ մը եւս ապացուցանելով ձեր սէրն ու նուիրուածութիւնը ձեր սիրելի վարժարանին, որուն միշտ քաջալեր կը հանդիսանաք նիւթապէս եւ բարոյապէս»:

«Դօ Սօլ»-ի երգով եւ Տէր Արշակ Աւագ Քահնայ. Խաչատուրեանի աղօթքով հանդէսը վերջ գտաւ, այնուհետեւ ներկաները հրաւիրուեցին պատրաստուած համեստ հիւրասիրութեան:

Հանդէսը փակուած էր, հանդիսականների մօտ բարձր տրամադրութիւն էր տիրում, գոհունակութեան արտայայտութիւն պէտք է համարել տեսնելով հայրութեան նուիրուած մարդիկ շէնք մոռացուած եւ նրանց արածն ու կատարածը յիշատակում է ի քաջալերանք սերունդներին:

Այս է իսկական կեանքի միտք բանին, լաւը գովի՛ր, որպէսզի իմաստալից կեանքը շարունակուի, իսկ արատը համարձակօրէն քննադատի՛ր, որպէսզի արմատախիլ լինի նա եւ լաւը փոխարինի նրան:

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

Շարունակում է 13-էն

պատասխանեցի, «Ո՛չ թրքութեան, եւ ո՛չ ալ որեւէ մարդկային կազմակերպութեան բերնին ինկած է հայր անհետացնելը: Թուրքին Անատոլու, մուտքի օրերուն - քիչ առաջ կամ ետք՝ պատմաբանները կրնան որոշել - Հայաստանէն անցան Ալի Ասլաններու, Լենկ Թիմուրներու նման արիւնխառու գազաններ, որոնք հայ գլուխներով բլուրներ, հայու արեամբ լիճեր կազմեցին: Սակայն այսօր իրենց եւ վո՛հմակներու հետքը չկայ, մինչդեռ հայը կայ ու կը մնայ: Իսկ ինչ որ 1453ին թուրքը չկրցաւ փորձել, ո՛չ թէ կատարել, 1915ին Թալաթի Փաշանիդ յոխորտանքով յայտարարեց. «Ինչ որ Սուլթան Համիտ երեսուն տարուան մէջ չչջողե-

ցաւ, այսինքն՝ հայ բնաջնջել, ես չորս տարուան մէջ պիտի կատարեմ: Միայն մէկ հայ պիտի թողում, ան ալ որպէս նմուշ թանազարանին»: Ինչ հիանալի պիտի ըլլար այդ մարդ-գազանը գետին փռելու տեղ՝ գառազեղի մը մէջ պահէին, եւ հիմա աշխարհի չորս կողմը պտտցնելէ ետք, բերէին Պէյրութ, ուր ամէն իրիկուն, քանի մը տասնեակ դպրոցներէ հոսող հազարաւոր կենսուրախ երկսեռ պատանիները տեսնելով՝ ապահովաբար սիրտը պիտի պայթէր»:

Արդ՝ խօսքս ձեզի կ'ուղղեմ, Ամերիկահայ, ճակատնիդ բարձր բռնած՝ նայեցէ՛ք յաւերժական պատմութեան: Դուք վկայ էք թէ ասկէ քսան-երեսուն տարի առաջ քանի մը վարձկան քաղաքագետներ համարձակեցան ձեր կառավար-

ԶԱՐԻՆ ԿԵՐՁԸ

Շարունակում է 6-էն

Նէօ-ֆաշիզմը՝ ցեղապաշտական դիմակով թէ կրօնական պատմունկով իր թունալից եւ սեւ գործը կը կատարէ... յիշեցնելով Հիթլէրն ու իր նմանները: Չարիքը կը շարունակէ իր ստոր արարքը՝ ապականելով չորսիդին, մթազնելով մարդոց անամպ երկինքը:

Բայց պէտք է մոռնալ չարին վերջը:

\*\*\*

Երեւոյթ մը տակաւին չհասկացայ. ինչո՞ք օգնեցէք տրուպիս:

Չարին վերջը Մայիս 9-ին կը նշէ Հայաստանի ժողովուրդը եւս, անոր կը միացնեն Շուշիի ազատագրութեան տարեդարձը: Շատ բնական եւ իրաւացի տօնախմբութիւն. յաղթանակի՛ օր. յաղթական տրամադրութիւն հին եւ նոր սերունդներուն համար: Բնականաբար այս պանծալի օրուան կը միանան Հայաստանի իշխանութիւնները, վերադաս մարմիններն ու իշխող կուսակցութիւնը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը: Անոր ղեկավարները արդեօ՞ք չեն հակասեր իրենց խօսքն ու գործը:

Արդարեւ, իրենց պաշտած ու սիրած, իրենց գաղափարախօսութիւնը Գարեգին Նժդէհի ուսմունք-

քին վրայ խարսխած, իրենց տարփողած ցեղակրօնութիւնը մէկ նմանակը չէ՞ ֆաշիստական գաղափարախօսութեան:

Խ. Միութեան վրայ խոյսացող եւ դէպի կովկաս ուղղուող գերման գորքերուն միացած չէ՞ր իրենց կուռքն ու տեսաբանը:

Մայիս 9-ին յաղթանակի օրը տօնախմբողը ինչպէ՞ս միաժամանակ կը հպարտանայ այն անձնաւորութեամբ, որ իր ջոկատով միացած էր հիթլէրական ուժերուն: Դուք անպարարութիւն չէ՞ք նկատեր այս երկակի վարքագիծին մէջ: Ինչ անհեթեթ երեւոյթ, երբ մէկ կողմէ կը փառաւորուի չարին վերջը, միւս կողմէ կը գովաբանուի չարին զինուորներէն մին: Հանրապետական կուսակցութեան ղեկավարներ իրաւունք ունին՝ Մայիս 9-ին ծաղկեպսակ գետեղելու Մեծ Հայրենականի զոհերու յուշարձանին, երբ իրենց երբեմնի առաջնորդը կը գտնուէր եւ կը կուռէր դիմացի խրամատի ետին, իր գունդով:

Յամենայնդէպս, ինչպէս հեքիաթներու մէջ, նոյնպէս պատմութեան մէջ պիտի մաղթէինք, որ չարը ունենայ իր վերջը:

Ինչպէս որ ունեցաւ... Հիթլէր-Մուսոլինի պիղծ գոյգը:

ԾԱՌԱՅԵԼ ԶԱՅՐԵՆԻՔԻՆ

Շարունակում է 6-էն

մը» վերնագրով պատմուածքների ժողովածուն: Բանասիրական գիտութիւնների դոկտոր Մարգարիտ Խաչատրեանը այս էլ քանի՛ տարի անխոնջօրէն ծառայում է հային եւ Հայրենիքին՝ բժախնորթօրէն կազմելով նախ՝ Համաստեղի, ապա՝ Արամ Հայկազի ստեղծագործութիւնների ժողովածուները՝ ծանօթագրելով, հակիրճ եւ սպառիչ

ըութենէն պահանջել, որ հայերը որպէս ոչ-քաղաքակիրթ ժողովուրդ՝ զրկէ քաղաքացիութեան իրաւունքէ: Սակայն այդ փուլ աշխատանքը շուտով մոռցուեցաւ: Դուք՝ ձեր հազարաւոր որդիներով կրցաք մեծ ծառայութիւն մատուցանել Ամերիկայի Միացեալ Նահանգներու մշակութային զարգացման:

Այդ հազարաւորներէն տանք միայն երկու օրինակ: Ամբողջ 25 տարի Միացեալ Նահանգներու գրական երկնակամարին վրայ փայլեցաւ Ուիլիըմ Սարոյեանի գրիչը, ամերիկեան գրականութիւնը ճոխացնելով փայլուն գործերով: Նման գաւազի ունենալը հպարտութիւն պիտի համարէր որեւէ քաղաքակիրթ ազգ:

Օրինակ մըն ալ տանք գործնական աշխարհէն: Յիսուն եւ աւելի տարիներ առաջ, հնարամիտ հայ պատանեակ մը կ'ապրէր Ա.Մ.Ն.էն ներս՝ գրպանը հագիւ յիսուն սենթ ունենալով: Սակայն արդար աշխատանքով, Ա.Մ.Ն.ի ներկայացուցած պատեհութիւններէն օգտուելով կրցաւ տիրանալ մէկէլ աւելի մենաշնորհներու: Այդ պատանեակը տեսաւ տղարներու հոսքը եւ ըսաւ. «Մահէ առաջ յիսուն միլիոն տոլար պիտի նուիրեմ բարեգործութեան», որուն առիւծի բաժինը անշուշտ պիտի ինար Ա.Մ.Ն.ին:

տեղեկութիւններ տալով: Երախտագիտութեան խօսք պիտի ուղղել նաեւ խմբագիրներ Գէորգ Եագըջեանին, Հայկանուշ Մեսրոպեանին, սրբագրիչներ՝ Տիրանուհի Մարգարեան-Կարապետեանին, Անահիտ Շահինեանին, ինչպէս նաեւ՝ «Տիրան Մեծ» եւ «Հայաստան» հրատարակչութիւնների աշխատակիցներին: Եթէ միայն ամէն հայ կարողանար ծառայել իր ժողովրդին եւ Հայրենիքին...

Մենք կենդանի վկաներն ենք Ձրլի-էն մինչեւ էջմիածին, Ալաքայէն մինչեւ Թեհրան՝ անոր նուիրած լիաբուն գումարներով կառուցուած դպրոցներուն, խաղավայրերուն, գրադարաններուն: Եւ այս երէկի պատանին է Ալէք Մանուկեան՝ Մեծ Հայը:

Փա՛ռք կու տամ Աստուծոյ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ Ա.Մ.Ն.ի պետական անձնաւորութիւններուն, որ պատեհութիւն տուին ինծի երկու ամիս ապրելու Ֆրեզնոյի մէջ: Թէեւ վեց շաբաթ հիւանդութեան անկողնին ծառայելով չկրցայ երկրին քաղաքակրթական սքանչելիքները եւ ամերիկահայ բարեկամներու եւ հարազատներու հիւրասիրութիւնը վայելել, սակայն կրցայ այս խղճուկ յօդուածով կաթիլ մը ծառայութիւն մատուցանել հայ դատի յատկացման:

Եթէ անմտութիւն պիտի ըլլար յայտարարել թէ՛ հայերէն խօսեցաւ երկրի վրայ առաջին ոտք դնող մարդը, բայց հաւանաբար իրաւունք ունինք ըսելու թէ հայախօս պիտի ըլլայ երկրի վրայ բնակող վերջին հայը, քանի որ հայը եղած է լոյսի եւ ճշմարտութեան ջահակիր:

Մնաք բարեաւ: Կը մեկնիմ Լիբանան:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

«Մասիս»ի յարատեւ ընթերցողներէն մի ոմն գնահատելով թերթի բովանդակութիւնն ու որդեգրած քաղաքական ուրոյն դիմագիծը \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

**ՄԱՐԱԶԴ  
ԿԱՐՊԻՍ ՈՐՁԵԱՆ**

Խոր կակիծով կը գոլժենք մեր հօր, մեծ հօր եւ հարազատին **ԿԱՐՊԻՍ ՌԸՁԵԱՆԻ** անակնկալ մահը որ պատահեցաւ Կիրակի, 12 Մայիս, 2013-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 13 Մայիս, 2013-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Նոր Հաճնոյ Սբ. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Սգակիրներ՝
- Տէր եւ Տիկին Արա Ռոզեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկին Վանիկ Ռոզեան եւ զաւակունք
- Տիար Սեւակ Ռոզեան
- Տէր եւ Տիկին Սարգիս Ռոզեան եւ զուսորդ
- Տիկին Վանտա Ղարիպեան եւ զաւակունք
- Տիկին Զեփիւռ Չարըքեան եւ զուսորդ
- Տէր եւ Տիկին Յակոբ Ժամկոչեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկին Պօղոս Այվազեան եւ զուսորդ
- Տէր եւ Տիկին Գրիգոր Դանիէլեան եւ զաւակունք
- Տիկին Մաքրուհի Գուճաշեան եւ զաւակունք
- Եւ համայն Ռոզեան, Դանիէլեան, Նաճարեան, Եթիմեան, Ժամկոչեան եւ Գուճաշեան ընտանիքներ եւ ազգականներ:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ԿԱՐՊԻՍ ՌԸՁԵԱՆԻ** մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.-ի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ԿԱՐՊԻՍ ՌԸՁԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Մասիս» Շաբաթաթերթի անձնակազմն իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն հարազատներուն:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**Գէորգ (ձՕ) ԹԱՇՃԵԱՆ**-ի մահուան տխուր առիթով Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլճի Սանուց Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Լենա Մանուկեանին:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ՌՈՂԱ ՊՈՅԱՃԵԱՆԻ** մահուան առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Միմա Կիրակոսեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեանին:  
Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ՆՈՒԷՐ ՀԱՅԹԱՅԵԱՆ-ԱՐԱՊԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Մասիս» խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակին՝ Տէր եւ Տիկ. Ընկեր Միհրան եւ Արմիկ Արապեաններուն:

**ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ՝  
ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅԱՄԱՐ**

Շարունակուած էջ 14-էն

30 տարիներու ծառայութեան համար:

Տպաւորիչ էր վարժարանի անցեալն ու ներկան ներկայացնող սահիկներու ցուցադրութիւնը, պատրաստութեամբ՝ Ֆրես Սայաթեանի: Գեղարուեստական յայտագիրի առաջին մասով ելոյթ ունեցաւ վարժարանի Ա.-Գ. կարգերու աշակերտներէն կազմուած պարախումբը՝ պարուսոյց Թալիթա ինքնակազմով ղեկավարութեամբ, իսկ ճրդ կարգի աշակերտները արտասանեցին հայերէն բանաստեղծութիւն մը եւ Ս. Գրային համարներ:

Երեկոյցի պաշտօնական մասը հոգաբարձութեան կողմէ նախաձեռնուած գնահատագիրներու ներկայացումն էր, որ կատարուեցաւ կազմի ձեռներէց ստենապետ՝ դոկտ. Վահէ Նալբանդեանի ձեռամբ: Գնահատանքի արժանացան տէր եւ տիկ. Ալպերթ եւ Թերի Պէյզեան-

ները, իրենց մէկ միլիոն տոլարի իշխանական նուիրատուութեան համար, որ պիտի յատկացուի վարժարանի գրասենեակներու շէնքին վրայ երկրորդ յարկ մը աւելցնելու ծրագիրին:

Գնահատուեցան նաեւ տէր եւ տիկ. Ճորճ եւ Վիվիան Լուսարարեանները՝ իրենց հարիւր հազար տոլարի նուիրատուութեան համար:

Ընթրիքէն ետք շարունակուեցաւ գնահատագիրներու տուչութիւնը: Գնահատուողներէն մէկը ձեք Մուսէէրեանն էր՝ վարժարանի նոր համակարգիչներու տեղաւորման եւ ծրագրման գործին անոր տրամադրած կամաւոր աշխատանքին համար:

Ապա, իր հանգստեան կոչուելուն առիթով, յատուկ գնահատանքի արժանացաւ վարժարանի 30 տարիներու ուսուցիչ եւ Հայերէնի բաժանմունքի պատասխանատու Աշխէն Իսբէնճեանը:

Գեղարուեստական յայտագիր-

**ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 110-ԱՄԵԱԿ**

Շարունակուած էջ 16-էն

զոր երգչախումբին կողմէ կատարուեցաւ դաշնամուրի նուագակցութեամբ, իսկ մենակատարի բաժինը ստանձնած էր արհեստավար ժմենեզուհի Գոհար Ղազէլեան:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ Արամ Խաչատրեանի Դարը փաստագրական փոքրիկ տեսանիւթը, որմէ ետք բեմը տրամադրուեցաւ Յուսաբեր եւ Կոկանեան ակումբներու պարախումբերուն: «Սարդարապատ»ի մենապարուհի Թանիա Քիւրքճեան կատարեց Հարսին Պարը, իսկ «Զանգեզուրի» տղաներու խումբի Լեզկինքա-ն եզրափակեց համերգի առաջին բաժինը:

Համերգի երկրորդ բաժինին «Զանգեզուր» եւ «Սարդարապատ» պարախումբերը յաջորդաբար կատարեցին Լեռնցիներու Պարը եւ Վարդագոյն Աղջիկներու Պարը, որմէ յետոյ խօսք առաւ երաժշտագէտ-դաշնակահար Հայկ Աւագեան: Բանախօսը, ուշադրաւ բնորոշումներով եւ իւրայատուկ դիտանկիւնէ, ներկայացուց երաժշտական աշխարհին մէջ Խաչատրեանին ու անոր ստեղծագործութեան տեղը, դերը ու ընկալման առանձնատեսութիւնները՝ դիտուած յետ-աքատմիք զիտելիքի ազատագրուած ակնոցով:

Այնուհետեւ կրկին բեմ բարձրացաւ «ԱՐԱՔՄ» երգչախումբը եւ կատարեց Զանգեզուրեան քայլերգը՝ «Զանգեզուր» պարախումբի պարակցութեամբ, իսկ Ռուբէն Սաստ կատարեց Կենաց երգը: Ապա հնչեցին Խաչատրեանական երեք վալսեր, Գարնանային Պարահանդէս եւ Բարեկամութեան Վալս՝ երգչախումբային փոխադրութեամբ եւ Մանկանց Լուսէ Երազը որպէս եռերգ՝ Անայիս Սալէհի, Գոհար Վարդանեանի եւ Վարդուհի Արթինեանի կատարմամբ:

Համերգին վերջին երկու աշխոյժ երգերը նոյնպէս երգչախումբային փոխադրումներ էին՝ Մենք Այսօր Ուրախ ենք եւ Քեզ Բիւր Օրհնանք:

Այս համերգին հնչած երգերէն եւ խմբերգերէն կարեւոր մէկ մասը այս ձեւով կը կատարուէին առաջին անգամ ոչ միայն եզրապատահայ բեմէն, այլ՝ առհասարակ: Երգչախումբի կողմէ հնչած խաչատրեանական 10 կատարումներէն ութն այս համերգին առաջին անգամ ըլլալով հնչեցին որպէս խմբերգ: Երեք երգ թարգամանուած էին ուսուցիչնէ, որոնցմէ երկուքը յատուկ այս երեկոյցի համար, իսկ եւս չորս երգ ստացած էին բանաստեղծական նոր խօսք, որոնցմէ երեքը յատուկ այս երեկոյցին համար: Տեղին է նշել, որ յոբելեանական այս համերգին համար նախատեսուած խմբերգային բոլոր փոխադրումները, թարգամանութիւնները եւ բանաստեղծական նոր խօսքերը պատրաստուած էին խմբավար Միհրան Ղազէլեանի կող-

մէ: Այսպիսով, համերգային երգացանկին գերակշիռ մասը կազմող խմբերգայնացուած եւ հայացուած երգերուն առաջին կատարման պատասխանատուութիւնը դրուած է այս գործին մէջ արդէն նշանակալի փորձառութիւն ունեցող «ԱՐԱՔՄ» երգչախումբի ուսերուն, իսկ առաջին ունկնդրման իրաւունքը՝ մեր խստապահանջ ու բարձրաճաշակ եզրապատահայ հանդիսատեսին:

Յոբելեանական այս համերգին առիթով պատրաստուած էր նաեւ 80 էջոց նկարագրող գեղատիպ գրքոյկ-լայտագիր մը, որուն տպագրութիւնը սիրայօժար լանձն առած էին Նուպար եւ Հրաչ Սիմոնեան եղբայրները: Գրքոյկին առաջին բաժինը կը պարունակէր օրուան յայտագիրն ու կատարուելիք երգերուն բառերը, ապա մեծանուն երգահանին կենսագրականը, եւ այնուհետեւ Դիմանկար Եւ Ինքնադիմանկար բաժնով ներկայացուած էին նշանաւոր մարդոց կարծիք-գնահատականները Խաչատրեանին մասին եւ իր՝ Խաչատրեանին կարեւոր արտայայտութիւններէն քաղուած քերթ՝ բոլորն ալ «պեղուած» աւելի քան կէս դարու ընթացքին հրատարակուած գրականութեանէն:

Արամ Խաչատրեանի յոբելեանական այս համերգին մտայնացումը ունէր լուծելիք կարեւորագոյն երեք խնդիր.

ա. Հնարաւորինս համակողմանի ներկայացնել մեծ երգահանին երաժշտութիւնն ու անձը:

բ. Ընդգրկել համայնքային կատարողական հնարաւորինս շատ ուժեր:

գ. Կատարողական եւ ներկայացման այլազան ձեւերով գոհացնել հանդիսատեսի հնարաւորինս լայն խաւեր ու այլազան ճաշակներ:

Ճիշդ այս երեք խնդիրները իրականացնելուն կը ծառայէին վերը նշուած բոլոր համերգային նախատեսումներն ու գործադրումները, եւ որոնք թէ՛ նպատակային էին, թէ՛ մատչելի, հետեւաբար լիովին արդարացուած:

Ամբողջ աշխարհի վրայ, հայկական եւ ոչ հայկական նախաձեռնութեամբ կազմակերպուած Արամ Խաչատրեանի ծննդեան 110-ամեակին նուիրուած համերգներու փառատօնային շարքին մէջ, մեր համայնքի ուժերով կազմակերպուած յոբելեանական այս բացառիկ տօնակատարութիւնը նշանակալի իրագործում մըն էր թէ՛ մեր համայնքին մշակութային եւ թէ՛ «ԱՐԱՔՄ» երգչախումբին համերգային կեանքէն ներս: Համերգը արձանագրեց աննախադէպ յաջողութիւն՝ հանդիսատեսի կողմէ ընդունուելով բացառիկ խանդավառութեամբ, եւ գնահատանքի մեծածաւալ յօդուածով մը յատուկ կերպով լուսաբանուեցաւ տեղական AL AHARAM WEEKLY-ի (21-27 Մարտ 2013) էջերէն:

Վստահ ենք, ինչպէս տնօրէնուհին իր խօսքին մէջ ըսաւ՝ «Մերտիւնեան» վարժարանը, իր շահած բարի համբաւով եւ ձեռք բերած պատուաբեր արդիւնքով, վառ յոյսերով պիտի նայի զալիքին ու պիտի հասնի լաւագոյնին»:

Պատիւն արժանաւորաց:

Վարձքը կատար բոլոր անձնուրաց աշխատողներուն:

Թղթակցուք ինքնը՝ վարժարանէն

րի երկրորդ բաժինով ելոյթ ունեցան վարժարանի շրջանաւարտներէն՝ Արմէն Գըւրբեանը՝ տուտուկի նուագակցութեամբ, Անի Քէշիշեանը՝ հայկական մենապարով, եւ ճրդ կարգի աշակերտները՝ հայկական պարով մը, պարուսոյց ունենալով Սարին Գագանճեանը:

Վեր. Ժան Խանճեանի օրհնութեան աղօթքով վերջ գտաւ երեկոն:

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԻՄԵՆՆԵՐ

Ծարուճակուած էջ 7-էն

Շահէն, որուն Աքիայի բանտէն փախուտտին մեծապէս օգտակար դարձած էր Յ. Ճանկիրէան: Օտեսայէն կը մեկնի թիֆլիս ու հանդիպումներ կ'ունենայ ՀՅԴ-ի ղեկավարներուն հետ, որոնց շարքին Ռոստոմ, Սիմոն Զաւարեան: Յ. Ճանկիրէան իր պատրաստակաւ նուիրուած կը յայտնէ որպէս գործիչ Սասուն մեկնելու: Իրեն կ'առաջարկուի հրապարակային ձեւով անդամակցիլ ՀՅԴ-ին (մինչ այդ, ան կը նկատուէր «դաշնակցութեան բարեկամ»): Փոխադարձ այս առաջարկները չեն իրականանար: Էջմիածնայ մէջ կը հանդիպի նաեւ Խրիմեան Հայրիկին ու անոր կը յայտնէ Արեւմտահայաստան մեկնելու (առաջին հերթին իր ծննդավայրը՝ Վան, ուր կը գտնուէին մայրը, կինը եւ երկու որդիները) իր նպատակը: Խրիմեան Հայրիկ խորհուրդ կու տայ հրաժարիլ այդ գաղափարէն:

Կը վերադառնայ Աղեքսանդրիա: Նոյն տարւան աշնան Աթէնքի մէջ լոյս կը տեսնէ Յ. Ճանկիրէանի՝ վերակազմակերպութեան քննադատող «Դիմակաւորները» գրքովը, որ հանրային կարծիքին մօտ յառաջ կը բերէ որոշակի հետաքրքրութիւն: Գիրքին մէջ արծարծուած միտքերը կը քննարկուին վերակազմակերպութեան Բ. համագումարին (Աղեքսանդրիա, 1898 Հոկտեմբեր) կողմէ (17):

1899 Ապրիլին, Յ. Ճանկիրէան կը մեկնի Աթէնք: Աշխատանք կը տանի հոն հրատարակող «Միութիւն» թերթը գործարկելու եւ տարածելու ուղղութեամբ, որովհետեւ այդ կը քարոզէր կուսակցութիւններու «միութեան» գաղափարը: Կը յաջողի Ռուսոնքի, Պուրկազի, Բրովաստիայի եւ Պաթուկի մէջ ստեղծել միութեան յաճախումներ: (Ապագային, Պուրկարիոյ «Միութեան» մարմինները կը դառնան Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան հիմնադրութեան բաղկացուցիչ մասերէն մէկը):

1900 Ապրիլին, Վառնայի մէջ կը հիմնէ «Երկսեռ Որբախնամ Ընկերութիւն Վասպուրականի» բարեսիրական միութիւնը, որ իր գործունէութեան յաջորդող 6 տարիներուն ընթացքին, տարբեր ձեռնարկներով կ'ապահովէ որոշակի գումար եւ այդ կը յատկացնէ Արեւմտահայաստանի տարբեր գաւառներուն մէջ գործող որբանոցներուն:

Այդ շրջանին աղմուկ կը հանէ եւ հասարակական հնչեղութիւն կ'ունենայ Վարդոյի գէնքերուն հարցը: Վարդօ (Յակոբ Վարդ Պատրիկեան) արեւելահայ երիտասարդ մը, Կ. Պոլսոյ մէջ կը միանայ Հնչակեան Կուսակցութեան եւ Գում Գաբուի ցոյցին յաջորդող ահաբեկչութիւններուն ան կը մասնակցի որ-

պէս կազմակերպիչ եւ գործադրող: Մաս կը կազմէ Վարիչ Մարմին: Երբ իր շուրջ վտանգը կը մեծնայ, ընկերները կը թելադրեն իր մօտ գտնուող կուսակցական կնիքը, կարգ մը փաստաթուղթեր եւ իրեն յանձնելու աւելի ապահով նկատուած ընկերներու: Վարդօ կը յամուի: Կը ձերբակալուի: Դատարանին առջեւ կ'ունենայ խիզախ կեցուածք (18): Որպէս ռուսահայաստակ կը յանձնուի ռուսական իշխանութեան: Իր ձերբակալութեան պատճառով, այն բոլոր իրերը գորս ընկերները կը թելադրէին անհետացնել իր մօտէն՝ կը բռնագրաւուին: Մաս կը նկատուի դաւաճանական վարմունք: Բանտէն ազատ արձակուելէն ետք կը հաստատուի Վառնա ու իր ազդեցութեան տակ կ'առնէ «Շարժում» թերթը: Կը միանայ Դաշնակցութեան եւ կը նշանակուի Պալքաններու շրջանի ՀՅԴ-ի ներկայացուցիչ: Այդ օրերուն, Պուրկազի մէջ հաւաքուած 12 սնտուկ գէնքն ու գինամթերքը, որ պէտք է տրամադրուէր արեւմտահայ ազատագրական պայքարին, խորհրդաւոր պայմաններու տակ կ'անհետանայ: ՀՅԴ Արեւմտեան Բիւրօն հարցին քննութիւնը կը յանձնէ Ռոստոմին: Յ. Ճանկիրէան եւս կը ներգրաւուի հարցի պարզաբանման եւ գէնքերու բացայայտման գործին մէջ: Ան այս կապակցութեամբ վարչական յանձնառութիւն մը չունէր: Հայ լեզուաբանական շարժման հանդէպ անկեղծ մօտեցումն է, որ կը դրդէր գինք հրապարակ հանել անհետացած գէնքերը, որուն կարիքը այնքան մեծ էր լեզուաբանական շարժման համար: Ռոստոմ եւ Յ. Ճանկիրէան կը դառնան գործակիցներ: Յ. Ճանկիրէան իր փնտռումներուն ընթացքին ձեռք ձգած տեղեկութիւնները մնացունջօրէն կը ղնէ Ռոստոմի տրամադրութեան տակ: Յ. Ճանկիրէան քանի որ նաեւ տեղեկ էր անցեալին Վարդոյի Հնչակեան Կուսակցութեան մէջ ունեցած անվստահելի կեցուածքներուն, համոզում կը գոյացնէ որ գէնքերու անհետացման մէջ Վարդոն գլխաւոր մեղաւորն է: Յ. Ճանկիրէան այս մասին հրապարակայնօրէն կ'անդրադառնայ «Իրաւունք» թերթին մէջ: Բացատրելու համար ինքզինք, ան կը գրէ. «Ինչպէս լեզուաբանական գինքերի մը պարտականութիւնն է կուսիլ բռնատիրութեան դէմ՝ իր ազգին ու հայրենիքին ազատութեան համար, նմանապէս ալ պարտական է լեզուաբանական ասպարէզին վրայ սլքատեցող կասկածելիները իրենց իսկական գոյնովը ներկայացնել ժողովուրդին » (19): Վարդօ «Շարժում»ին մէջ կը պատասխանէ Յ. Ճանկիրէանին, անձնական վիրաւորանքներու ոճով: Միւս կողմէ, Վարդոյին կուսակցական պատիժ սահմանելու ՀՅԴ-ի որոշումը կը ձգձգուի: Այս պատճառով Յ. Ճան-

կիրէան կը նեղուի: Իրօք, Վարդոյի հարցը կը քննարկուի 1907-ին, ՀՅԴ 4-րդ Համագումարին կողմէ: Վարդօ կ'ենթարկուի ահաբեկչութեան:

1904-ին, յաղթահարելէ ետք նիւթական եւ անցագրային դժուարութիւններ, Յ. Ճանկիրէան իր ընտանիքը Վանէն կը տեղափոխէ Պարսկաստան, ապա Օտեսա ու ծովու ճամբով Վառնա: Քսան տարուան բաժանումէ ետք կը միանայ կնկան եւ որդիներուն. «Տիկնոջս ձեռքը թօթուելէս վերջ սկսեցի գաւազներուս երեսները համբուրել, առանց գիտնալու եւ գանազանելու Յակոբն ու Հայկը, որովհետեւ երկուքն ալ հասակով չէին տարբերեր...», կը գրէ ան:

1906-ին, նամակով մը ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան իր պատրաստակամութիւնը կը յայտնէ կուսակցական պարտականութիւններ ստանձնելու: Նոյն թուին մաս կը կազմէ ՄԴՀԿ Վառնայի մասնաճիւղի վարչութեան:

Օսմանեան Սահմանադրութենէն ետք կը վերադառնայ Կ. Պոլսոյ: ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան կողմէ կը նշանակուի թուրքիոյ Շրջանի լիազօր գործիչ:

1909-ին կը մասնակցի ՄԴՀԿ Կ. Պոլսոյ 6-րդ Համագումարին եւ կը պաշտպանէ Կուսակցութիւնը օրինական դարձնելու տեսակէտը: Կը մասնակցի նաեւ ՄԴՀԿ Տաճկաստանի շրջանի Ա., Բ. եւ Գ. պատգամաւորական ժողովներուն: Գ. պատգամաւորական ժողովին կ'ընտրուի Տաճկաստանի շրջանի Վարիչ Մարմնի անդամ:

Կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամ:

Իր ստանձնած ազգային-կուսակցական բոլոր պաշտօններուն մէջ ալ հանդէս կը բերէ պարկէշտ, համարձակ եւ ուղղամիտ կեցուածք: Օրինակի համար, երբ Վանայ Իշխանի (Նիկոլ Պողոսեան) գլխաւորութեամբ ՀՅԴ-ն կը կողոպտէ Աղթամարի վանքին հարստութիւնը, այդ ինքնապաշտպանական նպատակներու յատկացնելու համար, Յ. Ճանկիրէան ձախլիկ այս արարքը Ազգային Երեսփոխանական Ժողովին մէջ կը քննադատէ այն կիրքով՝ ինչպէս քննադատած էր Վարդոյի արարքը: Անոր այս կեցուածքը Երուանդ Օտեսանի երգիծական գրիչին տակ կը ստանայ սա պատկերը. «Վան, Աղթամար, Դաշնակցութիւն. այս երեք բաները միշտ գինքը ջղաձգական նոպաներու կը մատնեն, իսկ երբ այդ երեքը որեւէ ինդիքի մէջ միանան իրարու, ա՛լ այն ատեն այդ նոպան իր ծայրայեղ

աստիճանին կը հասնի: Իր ընկերները յաճախ կ'աշխատին հանդարտեցնել գինքը, բայց ինք աւելի կը բորբոքի, աւելի կը փրփրի, աւելի կը հերոսանայ... Խեղճ մարդ, ո՛րքան կը շարչարուի արդեօք » (20):

1913-ին, Կ. Պոլսոյ մէջ կը հրատարակէ «Յիշատակներ Հայկական Ճգնաժամէն» գիրքը, որ ժամանակաշրջանի ազգային-կուսակցական կեանքին մասին կը պարունակէ պատմական հարուստ առարձ:

1914-ին, Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութեան ձերբակալութեան ատեն, կը ձերբակալուի նաեւ Յ. Ճանկիրէան: Հարցաքննութենէն ետք ազատ կ'արձակուի:

1915 Ապրիլ 24-ին, Հայ մտաւորականներու ձերբակալութեան ժամանակ դարձեալ կը ձերբակալուի: Կը տարագրուի Այաշ:

Տեղեւ. Տաղաւարեանի, Ալեւոնի, Խաթալի, Սարգիս Մինասեանի եւ Ռուբէն Զարգարեանի հետ կ'անջատուի մտաւորականներու խումբէն՝ Տիգրանակերտ զրկուելու պատրուակով: Բոլորին հետ կը նահատակուի Տիգրանակերտ չհասած:

- \*\*\*\*\*
- ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ**
- 11) Յ. Գանկիրիւեան, էջ 402-404:
- 12) Նոյն, էջ 529:
- 13) «Հ. (Հնչակեան Կ. Կուսակցութեան Գործադիր Յանձնախումբի Կեդրոնական Վարչութիւն- Ե.Ճ.) նամակը Նշան Տումանեանին», 1902 Մայիս 5: Հնչ. արխիւ:
- 14) «Նամակ Մուրատին» (գաղտնապահական պատճառներով նամակին տակ ստորագրութիւն կամ որեւէ նշում չկայ), 1902 Մայիս 5: Հնչ. արխիւ:
- 15) Հրայ Տասնապետեան, «Ռոստոմ-Նամակներ», Պէյրութ, 1999, էջ 213:
- 16) «Շարժում», 1898 Յուլիս 15:
- 17) Մեմօ, «Դիմակաւորները» գրքովը որեւէ հայկական գրադարանի մէջ չկրցանք գտնել:
- Այդ գրքովը լայն մէջբերումներ կատարուած են Ն.Ս.Ս.Թ.-ի «Միութեան Կամ Համերաշխութեան Խնդիրը», (Պոստք, 1909, հրատ. «Հայրենիք») ի թիւ 8) գիրքին մէջ:
- 18) «Հնչակ», 1891 Փետրուար 25: Նաեւ Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ա.Դ.Հնչակեան Կուսակցութեան» Ա. հտ., Պէյրութ, 1962, էջ 60:
- 19) Յ. Գանկիրիւեան, էջ 638:
- 20) Ե. Օտեսան, «Երկեր», Երեւան, 1956, «Մեր Երեսփոխանները», էջ 672:

**OFFICE SPACE FOR RENT**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենյակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն  
 հեռագրայնէ՝ (626) 398-0506

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Fax:-----